

# ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ\*

ՎԷՊ

ՀԱՆՐԻ ԲՕՐԴՈՒ

VI

Ժակ Ալվարը թերթեց իր յուշատետրը, նշանակեց կապոյտ մատիտով մի քանի կարեւոր տեղեր, ապա սկսեց մեծ մեծ քայլերով ձեմել իր աշխատութեան կարինէտում, ձեռքով շարժումներ անելով և թոռոցիկ խօսքեր արտասանելով:

— Շատ լաւ, ասում էր ինքն իրան, գործերս լաւ են գնում, կարծեմ այս օրը ինձ համար նոր հորիզոններ կը բանայ:

Նա առաջուց տեսնում էր մինիստրութիւնը տապալուած և խորհրդի նոր նախագահը իրան առաջարկելիս մի կարեւոր մինիստրական պաշտօն: Նրա ինքնավստահութիւնը աւելի հեռու հորիզոններ էր երեւակայում իր առաջ:

— Եթէ ինձ առաջարկեն մինիստրի օգնականի պաշտօն, ես կը մերժեմ ինձ պիտօք է գոնէ հասարակական աշխատութիւնների կամ վաճառականութեան մինիստրութիւնը տան: Ներքին գործերի մինիստրութիւնը աւելի լաւ կը լինէր, ի նկատի ունենալով՝ որ կարող էի փոփոխութեան ենթարկել իմ նահանգի վարչական կազմը, համաձայն իմ նոր կարծիքների, բայց այդ մինիստրութիւնը չեն տալիս սկսնակներին:

Կէս ամիս կար, որ նա վերաբնակում էր իր իր նախկին ընակարանում<sup>8)</sup> սեպտեմբերի վերջը և հոկտեմբերի սկիզբին անցնելով որպէս թէ որսորդութեամբ մի նախկին արմատական մինիստրի մօտ, որ պաշտպան և սիրող էր համարւում ժողովրդի, որին նա արհամարհում էր իր ահազին հպարտութեան բարձ-

\*.) Տես «Մուլճ» № 7.

րութիւնից, հսկապէս Ալվարը նախապատրաստել էր իր մուռքը՝ քաղաքական ասպարիզում և իր քաղաքական փոփոխութիւնը,

Նա հասկացել էր, որ Մէրանները թշնամբար և Աննին սառն էին վերաբերում իրան, առանց իսկական պատճառը գուշակելու, բայց նա մտածում էր թէ ժամանակը առնեն բան կը դրստէ և թէ աւելի լաւ էր տուժամանակ հեռանալ և համբերութեամբ սպասել անխուսափելի հաշտութեան: Զիմանալով իր կնոջ ծանր հիւանգութիւնը, չը նայելով պ. Մէրանի մի քանի անհանգստացուցիչ նամակներին, որոնց նա կարեւորութիւն չէր տալիս, որովհետեւ չափազանց խանգարում էին իր ծրագիրները, նա իր վերջին նամակում պահանջում էր որ կինը շուտով գայ Պարիզ իր մօտ: Նա պէտք ունէր կնոջը ընդունելութիւններ անելու համար, որովհետեւ նա սիրում էր համախմբել իր շուրջը այն նշանաւոր սնձանց, որոնց ծառայեցնում էր իր շահերին:

Հոկտեմբերի վերջին էր, Պարլամենտական նիստերը վերաբայուել էին: Այդ օր Ժակը պէտք է հարցազնդումն անէր կառավարութեան ներքին քաղաքականութեան մասին: Այդ ընդհանուր հարցապնդման շարժառիթներն այն խիստ ճնշումն էր, որ գործ էին զրել հարաւում պայթուած դործադուները զսպելու համար և սօցիալիստների գործողութիւններին նպաստաւոր մի նահանգապետի կոպիտ ձևով կատարուած պաշտօնանկութիւնը: Եթէ ի նկատի ունենայինք պարլամենտի զափիթներում տիրող ժխորը, լրագրական յօդուածները, պէտք էր կարծել, որ պարլամենտը անվստահ ընդունելութիւն պէտք է անէ չափաւոր մինիստրութեան, որ պահպանել էր երկրի վրատահութիւնը մի տարուց աւելի, իսկ այդ շատ երկար էր արդէն մեր անհամբեր ժամանակի համար: Կանխօրէն քննազատում էին Ժակ Ալվարի անձնաւորութիւնը, որ յայսնի էր գարձել իր արտասանած երկու կամ երեք ճառերով: առաջինը՝ Խտայիշի հետ ունեցած մեր առեւտրական յարաբերութիւնների, իսկ մենայածը՝ ելեւմտացյցի մասին և միմեանց հարցնում էին, թէ որքան լիղի ազդեցութիւն կամ ճարպիկութիւն պէտք է պարունակէր այդ արմատական նորընծայի ճառը, որին պարլամենտ էին ուղարկել չափաւոր ընտրողները:

Ժակը, պատրաստուելով պայքարի, չէր մտածում ամեններին այն սկզբունքների մասին, որ պէտք է պաշտպանէր: Անշուշտ, նա գեղեցիկ և որոտալից քարոզներ կ'արտասանէր այն ժողովրդի մասին, որի համար այնքան հոգս էր քաշում, ինչպէս ինքն էր ասում, որքան ձուկը ինձորի համար: Իսկապէս, նա հոգս էր քաշում միայն իր ապագայի հա-

մար: Կշռելով զանազան կուսակցութիւնների ունեցած շահսերը՝ իշխանութեան համելու, նա եկել էր այն եղբակացութեան, որ առաջադէմ ձախ կողմը ապագայում յաջողութիւն պէտք է ունենայ: Մի միտք միայն նրան անհանգըստացնում էր, այն է. «Եթէ սխալուած լինսմ, եթէ բուտինապաշտ երկիրը չը կամենայ առաջ գնալ, եթէ պատգամաւորները, անկերով անդադար իրանց աչքերը իրանց շրջանների վրայ, չը վստահեն առաջ ընթանալ...»

—Շատ ուշ է, եղբափակեց նա: Ես ընտրել եմ: Պէտք է յաղթել Ես իմ այս ճառով մինիստրութեան զլիխն բաւական հարուածներ կիշեցնեմ: Իմ հարուածներից կը դատեն ոյժս:

Նա մօտեցաւ Սենի վրայ նայող լուսամտին: Նա տեսաւ միայն գետափի ծառերը, սեւ ու մերկ և նրանց արանքով՝ դանդաղահոս գետը: Մշուշը ծածկում էր հորիզոնը: Այդ երկրի վհատ բանաստեղծութիւնը նրան չը գրաւեց ամեննեւին:

—Ես ատում եմ Պարիզի այս անկիւնը, մասձեց նա: Նա ստեղծուած է երազողների, բանաստեղծների համար (և որպիսի արհամարհանքով նա արտասանում էր այս խօսքերը): Հէնց որ վարձի ժամանակը լրացաւ, ես կը գնամ մի աւելի աշխոյժ, աւելի լուրջ թաղ, գործունեայ մի թաղ....

Նա հագաւ վերարկուն և իջաւ: Անցնելով դռնապանի խուցի առջեւից, նա բացեց կիսովի դուռը:

—Դէ, տիկին Պատու, ահա այսօր մենք կը տապալենք մինիստրութիւնը:

Եւ ձեռքով խփեց իր հաստ թղթապանակին:

—Ուղարկեցէք է ձեր մարդին ինձ մի կառք բերելու: Դռնապանը և դռնապանուհին հիացմունքով վերաբերւում էին իրանց անկէցին: Ժակը հմտութեամբ զրոյց էր անում ստորինների հետ և նոյն իսկ շողաքորթուած էր տեսնում իրան այդ զրոյցների մէջ, զգալով իր գերիշխանութիւնը: Տան սպասաւորները տհաճելի չէին նրա մաքին որ թէն փայլուն ձկունութիւն ունէր, բայց գոեհիկ էր մնացել:

Տիկին Պատու դուրս երեց իր ամուսնուն:

—Գնա, գնա, շուտով կառք բեր!

Դա մի տձեւ հաստ կին էր, որի ճարպոտ դէմքը փայլում էր: Նա թագաւորում էր տան բարձրից մինչեւ ներքեւ, ուստի և կառավարութեան ինդիրներում իրան ցոյց էր տալիս որոշ ձեռնախառնութիւն ունեցող:

—Յաջողութիւն, պարոն Ալվար, Այս երեկոյ, մենք կը գնենք «La Patrie» լրագիրը:

Ժակը ասաց կառավանին:

— Դիւրոն սրճարանը:

Նա նախընթաց օրը իմաց էր տուել, տիկին ֆերրէզին, որ մի փոքր ժամանակ սուզից և խղճահարութիւնից յետոյ դարձեալ եկել էր Պարիզ և միացել նրա հետո:

— Մենք կը նախաճաշենք միասին նիստից առաջ, ես կը բերեմ քեզ համար մուսքի տոմսակ:

Նա ամենեւին չէր վախենում յաճախուած տեղերից: Աշխատելով ամեն տեղ իր տաղանդը ի ցոյց դնել, նա դիմիկաբար և մնապարծութեամբ հրապարակ էր հանում իր բարի բախտը և նոյնը ստիպում էր անելու իր սիրուհուն:

Նա ուշացել էր: Խտալուհին ծանձրանում էր նրան սպասելուց թէեւ նրա մոյգ արդուզարդը աշքի ընկնող չէր, բայց նրա հիանալի սեւ մազերը և ծիրանի վարդի նման նրա ալ բերանը իր վրայ էին դարձնում բոլոր նայուածքները: Նա հասկացաւ թէ ինչ տեսակ կնոջ տեղ էին ընդունում իրան, հասկացաւ որ ժակը մատնում էր իրան ծառաների արհամարհանքին այդպէս թողնելով իրան: Բայց ժակը թէ խօսքով և թէ իր գործողութիւններով միշտ խնարհեցնում էր իրան ամեն բան, ուստի և երբ կոմսուհին տեսաւ նրան կառքից իջնելիս, նա, խոնարհուած, մոռացաւ գանգատուել:

Ժակը ներողութիւն անգամ չը խնդրեց, ընտրեց մի սեղան և վերցրեց կարտը, որին չը նայեց նոյն իսկ, այլ անմիջապէս պատուիրեց:

— Ոստրէներ, առանց լիմոնի, տամնեւութ հատ, թերիսաշ հաւկիթներ, բիֆտեկս, լաւ եփած, կէս չի սոտէրն և սէն-էմիլիոն գինի: Գնացեք, շտապեցէք և յայտնեցէք տնտեսին:

Սպա աւելացրեց ինքն իր համար:

— Բօրտօն ոյժ է տալիս և չէ տաքացնում. Նա հռետորների գինին է:

Միայն դրանից յետոյ մտածեց իր սեղանակցուհուն հարցըներ:

— Պատուիրած նախաճաշը յարմար է ձեզ:

Կոմսուհին հաւանութիւն տուեց, բայց մի փոքր յետոյ, երբ նա ոստրէներին ձեռք չը տուեց, ժակը ասաց.

— Զարմանալի է. այս րոպէսս դուք սիրում էիք նրանց:

Նա խօսեց նիստի մասին, նշանակեց այն քաղաքական մարդկանց, որոնք պէտք է մասնակցէին վիճարանութիւններին և նկարագրեց ամենքին խիստ դառն հեգնութեամբ: Նա ամենեւին չէր քաշւում նրա առաջ: Նա յատկապէս հարուածում էր պարկեշտ և յարգելի համբաւները:

Աղանդերին՝ նա կանչել տուեց մի կօմմիսիոնէր և տալով նրան իր բնակարանի հասցէն, ուղարկեց նրան բերելու իր պօստը: Նա սպասում էր ստանալու իր հարցապնդման օգտակար մի տեղեկութիւն:

Կօմմիսիոնէրը բերեց միայն մի հեռագիր: Ժակը բացեց, կարդաց և նորից ծալեց առանց մի բան ասելու: Խտալուհին հասկացաւ նրա գէմքից որ աւելի մի խոշընդոտ է պատահել քան տիրութիւն: Ժակը մի քանի րոպէ խորասուզուած մնաց մտածմունքի մէջ, ապա իր սովորական կոպտութետմբ ասաց:

—Վերջացրիր, թող ինձ ուրեմն...: Ինձ հարկաւոր է մի քանի յիշողութիւններ դասաւորել պարլամենտը գնալուց առաջ, Խտալուհին ցոյց տուեց հեռագիրը:

—Ոչինչ չը կայ ուրեմն:

Նա նշան արեց թէ ոչ:

—Քեզ կը տեմնեմ նիստից յետոյ:

—Ոչ, զազը: Վելլիէ փողոցը. քեզ կ'իմացնեմ:

—Ուրեմն, մնաս բարեւ: Քո գեղեցիկ խօսքերդ ևս կը կլանեմ շուտով, պարլամենտում:

Նա հագաւ ձեռնոցները և դուրս եկաւ: Ժակի հոգսն չէր անդամ թէ դրսում, այդ անձրեւով և մշուշով ինչ պէսք է անի այդ կինը մինչև պարլամենտի ժամանակը համար:

Ժակը պահանջեց մի ուղեցոյց և որոնեց Աննէսիի գնացքի ժամերը: Ժամը երկու և կէսին մի ճեղընթաց կար, որ հասնում էր Աննէսի առաւտեան ժամը մէկին, իսկ մի ուրիշը գնում էր երեկոյեան ժամը եօթին և քասնհինդ րոպէին և տանում էր տասներկու ժամ աւելի ուշ:

Նա նայեց ժամացոյցը: Ժամը մի և երեսուն րոպէ էր, նա ժամանսակ ունէր ընտրութիւն անկուտ:

—Ես կառոք չեմ գանի գիշերուայ մէջ Մէնթօն գնալու համար, ասաց նա ինքն իրան հացի գրանից....

Նա նորից կարդաց հեռագիրը, որ պարունակում էր այս մի քանի խօսքերը. «Աննին շատ վաս է. եկէ իսկոյն. Մէրան»: Նա մտածեց:

—Հայրը պաշտում է նրան և երես է տալիս: Նա չափազանցում է նրա բոլոր յոգնութիւնները: Ես ապահով եմ, որ տիկին Մէրանը ինձ այսպիսի հրամայողական կերպով չէր հեռացրի: Եկէ իսկոյն: Ուրեմն իմ պատուական աներս մոռանում է, որ ես այսօր հարցապնդումն եմ անելու: Լրագիրները այդ մասին բաւականին խօսեցին: Գաւառական այդ ծակերում, ոչ մի բան չը գիտեն: Երբ մարդ այնպիսի փեսայ ունի, որի քաղաքական ապագան փառաւոր է երեւում, պէտք է հետաքրքր:

րուել, թէ նա ինչ է անում: Աննին վտանգաւոր հիւանդութիւն չունէր, երբ ես նրան թողեցի: Միայն մի քիչ սակաւարիւն էր: Սրդ, սակաւարիւնութիւնից մարդ չէ մեռնում: Առողջութեամբ ամենաքնքոյներն են թաղում ամենահուժկուներին...»

Նա չէր վարանել իր որոշման մէջ, բայց աշխատում էր պատճառաբանել այդ որոշումը և գունաւորել, չը նայելով որ ինքն իր հետ անկեղծ էր: Նա չէր ուզում իջնել մինչև իր ես սափրութեան խորքը, որովհետև մահուան յայտնութիւնը տալիս է մեր գործողութիւններին մի այնպիսի խորհրդաւոր կարեսութիւն, որ հարուածում է նոյն իսկ ամենաանզգայուններին:

—Ես կը մեկնեմ երեկոյեան ճեպլնթացով: Աւելի նուազ անձնական պատճառներ են պէտք հարցապնդումն յետածել տալու համար: Ժամը հօթին նիստը վերջացած կը մինի և գուցէ մինիստրութիւնը՝ տապալուած: Ես հէնց ճիշտ ժամին կը հասնեմ:

Հանդարտուած՝ նա չնորհաւորեց իրան.

—Մի և նոյնն է, սակայն անհաճոյ է: շատ ուրիշները ինձ տեղ կը կորցնէին իրանց:

Նա բաւականութիւն էր զգում իրան տրամադիր և պատրաստ մտնելով կռուի, չը նայելով վատ լուրին:

Իսկ այնտեղ, գիւղում, իրանից շատ հեռու, Աննին աւարտում էր իր մատաղ կեանքը հանդարտաբար: Քանանեւչորս տարեկանում արդէն այլ եւս ոչ մի բան չէր հրապուրում նրան երկրի վրայ: Նա չէր սպասում ոչ մի երջանկութիւն և նոյն անմեղ հոգին ճանաչում էր բոլոր այն գարցութիւնները, որոնք ապաստանում են սիրոյ անուան ներքոյ: Ժակը սպանել էր նրա մէջ ապրելու ցանկութիւնը: Եւ սակայն, իմանալով նրա մօտալուտ վախճանը, նա չէր մտածում ոչ իր արհամարհանքներին ոչ եւս իր անհաւատարմութիւններին:

Աւելի գործնական, նա ինքն իրան ասում էր.

—Ես ճարպիկ չը վարուեցի բոլոր այդ Մէրանների հետ: Ես հեռացրի նրանց ինձանից յիմարաբար: պէտք է վարմունք փոխեմ:

Եւ նա մինչեւ անդամ չամաչեց այսպէս մտածելու.

—Եթէ անախորժ գէպքը պատահի՝ ես կենթարկուեմ շատ անհաճոյ պահանջումների: բայց գրանից ես ունեմ միայն իմ ոռձիկը և իմ ծաղրալի եկամուտները: Ահ, ամեննեին ոչ, չը պէտք է այդ լինի:

Իր առաջիկայ ճառը ծանր մտախոհութիւններով չը խանգարելու համար, նա վանեց այդ տիսուր առարկան:

—Ամսին ուշքից գնացած կը լինի, իսկ նրա շրջապատող ները սարսափած կը լինեն. ուրիշ բան չը կայ: Խեղճ փոքրիկ! նա շատ զողար է. ևս նրան կ'ուղարկեմ ձմեռն անցկացնի հարաւում:

Այդպէս լաւ խօսքերով հանդարտացնելով իրան, նա վեր կացաւ և պահանջեց հաշիւը՝ վճարելու համար:

—Այստեղ մի սխալ կայ, նկատեց նա սպասաւորին. դուք նշանակել եք մի աման պտուղ, որն ես չեմ պատուիրել:

Նա վճարեց ուղղուած հաշիւը և միտքը հանդարտ՝ դուրս եկաւ սպարլամենտը գնալու համար: Մադըլէն եկեղեցու առջեկի ժամացոյցը ցոյց էր տալիս ժամը երկու ժամը երկուսից մինչ չեւ եօթը և քամն հինգ րոպէն նա ժամանակ ունէր կազմա. կերպել իր քաղաքական յաղթութիւնը:

... Երեկոն վրայ էր հասել և մշուշի մէջ, Բուրբօնեան սպալատի առաջ անց ու դարձ էին անում խմբեր, անցնելով հնիստի լուրերն ստանալու, չը նայելով վատ եղանակին: Անձրեւակաների տակ աշխոյժով վիճաբանում էին: Մեծ դէսքերի կարապետ ջղային անհնանգատութիւնը յուղում էր այդ հետաքրքիրներին: Գազի կտուցների բոցը հազիւ ստուեր էր ձգում: Գնեստի վրայ, շրջմոլիկ լուրի նման, արագ վազում էին անց ու դարձ անող նաւակների կարմիր և կանաչ ճրագները:

Ժակ Ալվարը, շառագունած, առանց ուշագրութիւն դարձնելու թափուող անձրեւին, երեւաց այն փաքը ծառուղիի վրայ, որ միանում է Օրօթի գետափին: Երկու արմատական պարագլուխները, Ֆելտան և Հիտուքֆոր, առաջնորդում էին նրան:

—Սպասեցէք հինգ րոպէ, ասում էր վերջինս, մենք կ'ունենանք քուէարկութեան հետեւանքը: Մեծամասնութիւնը մեր կողմն է: Հինգ րոպէից յետոյ այլ ևս մինիստրութիւն չի լինի:

Ժակ նայեց ժամացոյցին դազի կտուցի տակ.

—Ժամը վեց և երեք քառորդ, ևս հազիւ չորերս փոխելու և ձեղընթացին համսնելու ժամանակ ունեմ:

—Գնացէք, գնացէք գոչեց Ֆելտանը շարժելով իր մեծ քաղուկները: Տիկին Ալվարը ձեզ սպասում է: Խեղճ բարեկամ, որքան քաջութիւն հարկաւոր էր ձեզ, որքան քաջութիւն:

Այս Ֆելտանը այն բարի յեղափոխականներից մինն էր, որոնք իրանց ընտանիքում նմանում են ձեզ ոչխարների:

Ժակը սեղմեց նրանց ձեռքը:

—Դուք ջիղ և բոունցը ունէք, առաց դարձեալ Հիտուքֆորը, եւ երիտասարդ պատգամաւորը դիտէր այդ չոր և մաօպոստոս, 1902.

շուշած մարդի կօմպլեմենտի արժէքը, Նա ասաց նրանց մեկնելիս:

—Հեռազրեցէք ինձ հևտեւանքը այս հասցեով. Մէնթօն, Սէն-Բէրնար, ցպահանջ:

Եւ երբ բանում էր կառքի գոնակը մտնելու համար, Նա կիսովի յետ նայեց և աւելացրեց.

—Ուղարկեցէք ինձ լրագրների մի կապոց. Նոյն հասցէն, Նա կուչ եկաւ կառքի անկիւնում. կառքը շուտով անհետացաւ մոռյլ մշուշի մէջ:

Յետ դառնալով Ֆելտանի հետ, Հիտաքօրը սկսեց այպահել.

—Ի՞նչ հրաշալի միտք յղացար խօսելով՝ նրան իր կնոջ մասին: Ես փոքր ինչ առաջ նրան տեսայ Դիւրոնի մօտ նախաճաշելիս իր սիրուհու հետ:

—Դուք ապահով եք, հարցրեց միւսը, որ խստաբարոյ էր և յաջողութիւն չունենալով կանանց մօտ, ատում էր յատկապէս վաւաշուտթիւնը:

—Բայց այդ սիրուհին շատ գեղեցիկ է, պնդեց Հիտաքօր:

Եւ լեզուն չըխկացրեց ատամներին:

—Ուրեմն ինչ էր այն սրտառուչ ֆրազը մեր ամենասիրելի էալիներին սպառնացող մահուան մասին, որի պատկերը նա հեռացնում էր իրանից, որպէս զի կարողանայ մտածել միայն այն պարտաւորութիւնների մասին, որ դրեւ է նրա վրայ հայրենիքի և իր ներքին խաղաղութեան սէրը: Նրա այդ ֆրազը ցնցեց ամբողջովին ինձ:

—Իմ խեղճ Ֆելտան, ուրեմն դուք միշտ պէտք է հռետորութեան խարուածը լինէք: Ցիշում էք, ինչ որ ձեզ ասացի Ալվարի առաջին ճառից յետոյ. «ահա մեր ամենքի տէրը»: Նրա ուզեղը նոյնչափ սառն է, որքան նրա խօսքը տաք է: Միայն նա իր ոյժի վրայ մեծ համարումն ունի:

Նա քաջեց տարաւ իր պաշտօնակցին պարլամենտի գաւիթները:

—Պէտք է քուէ արկութիւնը վերջացած լինի, Ո՞վ պէտքէ նոր մինիսարութեան զլուխ կանգնի: Ալվարը, որ տապալեւ է հինը...:

—Դուք կարծում էք, որ մինիսարութիւնը տապալուել է:

—Անշուշտ... նա շատ երիտասարդ է. նրան կը տան օգնականի պաշտօն:

Եւ նրանք մտան նիստի սրահը...:

Մի քառորդից յետոյ, Ժակը՝ որ պատուիրել էր կառապա-

Անին Սէն-Ժերմէնի բուլվարով անցնել կիօնի կայարանը գնալու համար, նորից անցնում էր պարլամենտի առջեց; Արդէն լրագրութանառ տղաները աղաղակում էին:

—Պահանջեցէք... մինիստրութեան անկումը...:

Եւ Օրսէլի գնտափի վրայ կանգնած խմբերը հետզհետէ հատամալով զրեթէ մի ամբոխ էլին կազմում: Նա մտածեց.

—Լրագիրները գեռ չեն կարող յայտնել անկում, բայց ատղաները արդէն զիտեն: Ուրեմն ճիշտ է:

Նա նայեց ժամացոյցին և զլուխը դուրս հանեց պոռակով.

—Շտապեցէք, եթէ ոչ զնացքին չեմ հասնի,

Նրա հրամայողական ձայնը թօթափեց կառապանին, որ մտրակեց ձին:

Կայարանի առաջ նրան սպասում էր տիկին Ֆերրէզին: Ժակի ճառի մէջ արած ակնարկից նա հասկացել էր այն հեռագրի իմաստը, որ իր ներկայութեամբ բացել էր:

—Անին մեռել է, մտածում էր նա:

Եւ որովհետեւ նա գիտէր երեկոյեան ձեպընթացի ժամանակը, ուստի շտապել եկել էր մասիթարելու տարփածուին:

Ալվարը անցաւ նրա առջեց: «Դուք! ես մեկնում եմ...» Վազեց գնելու երեկոյեան լրագիրները մի կուպէ բռնեց առաջին կարգում: Այդտեղ եկաւ նրան դատա իտալուհին մի զամբիւղ լի պաշարեղինով, որ գնել էր մտածելով թէ նա ժամանակի ունենայ ճաշելու:

Նրկաթուղային պաշտօնեաները պոռում էին արդէն. «Ի կառք» և չպինդով վակում էին դաները:

—Իմ խեղճ բարեկամ! ասաց իտալուհին: Որպիսի վիշտ: Մեռնել քանի տարեկանում:

—Նա չէ մեռել ուղղեց նրան ժակը և առաւ ձեռքից կողովը. նա միայն ծանը հիւանդ է:

Տիկին Ֆերրէզին անկեղծօրէն դոչեց.

—Ո՞հ, տար Աստուած որ նա ապրի:

Սակայն կայարանը գալիս, նա չէր կարողացել արդեկել իրան մտածել թէ այժմ այլ ևս ոչ մի բան չէ բաժանում իրան ժակից և կարող է ամուսնանալ:

Իսկ ժակը ասում էր ինքն իրան:

—Այս կինը սկսել է չափից գուրս զալ. պէտքէ զապել նա հարցրեց իտալուհուն:

—Մնացի՞ր մինչև նիստի վերջը. մինիստրութիւնը տապալուեց, թէ ոչ:

—Ոչ, ոչ! հէնց որ դու մեկնացիր, ես վազեցի այստեղ

քեզ մի անդամ եւս տեսնելու իսեղ բարեկամ! ես սպասում եմ  
քեզ կէս ժամից 'ի վեր:

—Շատ յիմարութիւն է. պէտք էր մնալ!

Եւ այդ կծու խօսքն ասելով, նա սեղմեց իր սիրուհու  
ձեռքը, մինչ սա կամենում էր համբուրել նրան և մտաւ վա-  
գօն: Գնացքը սուլեց. լուսամտից նա տեսաւ որ իտալուհին  
լացում է: Սա չէր բամել վիշտը մինչեւ մրուրը, թէն վազուց  
գիտէր, որ սէրը մանաւանդ մի տանջանք է:

Լիօնի կայարանի լոյսերը կարծես ընթացող գնացքի  
հետ փախչում էին: Ժակը տեղ բռնեց, բացեց «Le Temps» լրա-  
գիրը և որոնեց պարլամենտի նիստի նկարագրութիւնը: Վիճա-  
բանութեան համակարգ առաջ, լրաբերը ստուերագծում էր գա-  
ւիթների ոգևորութեան մի թեթև պատկեր և առաջ էր բերում  
ճառախօսների ծանօթ անձնաւորութիւնների ցուցակը: Երիտա-  
սարդ երեսի սիմանը այս մտածմունքն ունեցաւ.

—Օդափոխութեան համար գնացածները ուշ են վերա-  
դառնում Պարիզ: Յունուար ամսին ես աւելի շատ ունկնդիր  
կ'ունենայի բարձր դասակարգից:

Նա կարդաց իր ճառը: Դա՛ իրան նենդամտութեամբ կազ-  
մուած մի գեկուցագիր էր մինհստրութեան գործած սխալների  
մասին պարլամենտի փակուելուց ի վեր և մեր ներքին անկար-  
գութեան մի դառն նկարագիր: Ընդդիմադրական ճառախօսները  
աւելի սաստկացնում են այդ կծու քննադատութիւնները: Ժակը  
չէր հանդիպել այն բուռն հակառակութեան, որ սպասում էր ազ-  
գային ժողովի մի կուսակցական հատուածից: Զափաւոր խումբը,  
որ պէտք է որոշչէր իր նշանաբանը առաւօտեան մի ժողովում,  
չէր կարողացել համաձայնութիւն կայացնել իր բռնելի տակտի-  
կայի մասին: Իր նախագահի բացակայութիւնը, որ հիւանդացել  
էր շատ անյարմար ժամանակ, նրան դուրս էր հանել շաւզից:  
Գալով աջակողմենան կուսակցութեան, նրա ներկայացուցիչները  
որսորդութիւն էին անում և նրա նստարանները դատարկ էին:  
Յոյս էին դրել հարցապնդովի անփորձութեան վրայ, բայց շատ  
սխալ ենթադրութիւն էր այդ: Լինելով մարտնչող բնաւորու-  
թեան տէր մարդ, ժակ Ալֆարը իրախուսում էր իրան կոռիփ:  
Զափաւորների ուժքնութիւնը չէր, որ կարող էր յետ պահել  
նրան պայքարից: Խիզախ՝ յարձակման մէջ, նա աւելի ահարկու  
հանդիսացաւ առարկութեան մէջ և ընդհատումների հեղինակները  
բաւական դժնդակ հարուածներ ստացան: Նա յարձակում էր  
կազմալոյն խմբերի վրայ և նրա կողմնակիցները նիստի սրահի  
մէջ կոպիտ ոստիկանների պաշտօն էին կատարում...:

Նա ուրախ ուրախ ժպտում էր կարդալովիր ասածները և կրկնե-

լով՝ որպէս զի աւելի լաւ հիանայ իրանով։ Ապա նա անցողակի կարդաց ներքին գործերի մինիսարի պատասխանը, որին կատազ զցրել էին նրա քսութիւնները և տեղեկութիւնների ստուգութիւնը, Անձնապատճան և մաղձուտ, այս մինիստբը այնպիսի ճառեր էր արտասանում, որոնք նրանում էին յարձակումների։ Ըստ հանրապէս, նրա այդ յարձակումները յաջողում էին, բայց այս անգամ նա ամին չափ մնցաւ և իրքի մի վիրաւոր վարագ՝ նա վրայ էր տուել առանց աշու ու ձախ նայելու։

Օրագրի պատմուածքը վերջանում էր այդտեղ, երեկոյեան ժամը հնդին։ Ժակը սահնեցրեց ձեռքից թերթը և յիշողութեամբ շարունակեց նիստը։ Նա վերսկսել էր իր ճառը, այս անդամ ստիպուած լինելով պաշապանելու իր անձը, ըստ որում մինիստը յանդիմանել էր նրան փոփոխամտութեան մէջ։ Այդ հակապատասխանի մէջ, զանց առնելով իրողութիւնները և բաւականանալով ճարտարախօսութեամբ, նա բացարկել էր որ սահպուած էր փոխել իր կարծիքները ժողովրդի սիրոյ, ճշմարտութեան ցանկութեան և կասապարչական կեղծաւորութեան ձանձրոյթի պատճառով։ Նա մի հիանալի ընդարձակութիւն առնեց իր ճառին և իր նախկին բարեկամների առբողջ կուսակցութիւնը գատափեաց։ Սյա ժամանակ էր, որ իր անկեղծաւթեան իրքի առնաւատչեայ, նա արտասանեց իր հոչակաւոր քրազը իր օջախին սպառնացող սուզի մասին և իր ներկայութեան մասին ամբիոնի վրայ, չընայելով վշտին և անհանգատութեան։ Այդպիսով հակաճառութիւնները մեծացել էին յանկարծ և խորհրդի նախագահն ինքը ստիպուած էր ձեռք առնել իր վտանգուած կարինեափ և քաղաքականութեան պաշտպանութիւնն ու գնել վստահութեան հարց։

Ի՞նչ էր արտադրել քուէարկութիւնը։ Անշուշտ այդ ժամին, արմատական կուսակցութիւնը արձանագրում էր իր յաղթութիւնը և արգէն շարժւում էր ստանալու համար հանդուցեալ մինիստրութեան ժառանգութիւնը։

Պարփզից հեռու, ինձ զանցառութեան կը տան, մտածում էր ժակը։ Հիասթիգորը, որ նախանձու է, ինձ որ և է մի անկարեւոր պաշտօն առաջարկել կը տայ, ևս նրանց խորհուրդ չեմ տալիս ինձ մոռանալ Նրանք այժմ ըմբռնեցին, իմ ոյժը...։

Գրգոռուած, արբած պայքարի այդ օրով, նա գնաց ծխելու նրբանցքում, նա կարևոցար նայեց երկու կամ երեք ճանապարհորդի, որ ոչ մի ուշազրութիւն չէին դարձնում իր վրայ և արհամարհեց նրանց, որովհետեւ անդիտամում էին իր պարլամենտական դերը։ Ապա նրա խիստ լարուած և յոդնած միաքը բայց

թողեց վառասիրական նպատակները, Քիչ քիչ նրա եռուն արիւնը ստիպեց նրան ափսոսալ իր սրբուհուն, թէն նա որոշում էր արդէն խզել կապը իտալուհու հետ, բայց հաճութեամբ նրա միաքը կանգ էր առնում այդ կապի քաղցր գուարձութիւնների վրայ:

Երբեմն երբեմն, քաղաքական անուրջների և կամ սիրահարական լիշտութիւնների այդ արշաւանքի ընթացքում, նրա միտքը պաշարւում էր յանկարծ այս ծայրայեղ հարցմունքով.

— Բայց եթէ նա մեռել է:

Սակայն նա լաւ ախորժակով կերաւ իր հեռատես հարձի պաշարեղին:

Աննին մեռել էր օրամուտին, առանց հոգեվարքի և մի այնպիսի կրիզիսի ժամանակի, որ ամենին վանագաւոր չէր երեւում, ճիշտ այն ժամին, երբ ժակը այդ մատաղ մահից օգուտ էր քաղում ամբիոնից շացնելու իր ունկնդիրներին:

Երկրորդ օրը, կիւսիէն Հալանդը, որ եկել էր տեղեկանալու հրւանդի առողջութեան մասին, իմացաւ այս տիտուր գէաքը Մի պառաւ սպասուհի նրան ասաց դասնը.

— Մեր իսկզ աիկինը աւանդեց հոգին երէկ իրիկուն:

— Ահ, կարողացաւ միայն ասել նա:

Դժբախտութեան ծանուցումը մեր մաքի սովորական վիճակից վեր է անցնում: Երբ մենք ամենին պատրաստուած չենք այդ լուրին, մեզ մի քիչ ժամանակի է պէտք ծշմարտութիւնը իմանալու համար: Մեր հոգին մի հատիկ ճախրով չենասնում մեծ ուրախութիւններին կամ մեծ վշտերին:

Լիւսիէնը ոչինչ չեր զանում ասելու:

Երբ դուռը պէտք է փակուէր իր առաջ, նա հարցրեց.

— Կարեի՞ է տեսնել նրան:

Նրան մացրին սպազեաց սենեակը, որ վերածուել էր մատուի: Աննին հանգստանում էր անկողնու վրայ, որ ծածկուած էր վարդերով և յամիկներով: Մոմերի լրյուր ոգեւորում էր նրա թափանցիկ գէմքը նոյն իսկ կեանքի նմանութեամբ և նրա երեկար արտեւանունքը՝ խոնարհուած աչքերի վրայ, որոնք արդէն կորցրել էին իրանց գեղեցկութիւնը, աւելի ևս մեղմացնում էին նրա հրեշտակային դիմադժերի մաքրութիւնը:

Երիտասարդը ճաշակեց այդ սրտաճմիկ տեսարանի դառնութիւնը:

— Երբ ես եկայ փոքր ինչ առաջ, մտածում էր նա, եռ ման էի դալիս ոսկեզօծ տերեւների վրայ, որ քամին շաղահարել էր: Որովհեան ես գփաէի, որ Աննին երկար չի ապրի, ծա-

սերի այդ զարդարանքը ինձ սիրելի էր, իր գիւրաբեկ հրապոյրի՝ ասառածային այն չսորքի համար, որով տպաւուրուած էր նրա ժպիտը և զարդարուած էին նրա խօսքերը, նրանից այնպէս բնականաբար ըղիող առաքինութեան համար, ես սիրուած էի նրան, որ այժմ մեկնուած է այնտեղ; ես զիտէի, որ նա մեռնելու է և նրա մահը ապշեցնուած է ինձ; ես չեմ տանջւուած, բայց ցանկանուած եմ տանջուել: ինձ թւուած է, որ այդ ընտիր հոգու էութիւնը գեռ երկար կ'ապրի ինձ՝ համար, նման մի փոքրիկ խորհրդաւոր լապտերի, լուսաւորելով իմ առաջ կեանքը և ցոյց տալով ինձ նրա բարութիւնը; Եւ սակայն ես այլ եւս չեմ տեսնի նրա նայուածքը, ոչ ժպիտը; Ես չը կարողացայ տեսնել նրանց վերջին անգամ, տպաւորել իմ մէջ ընդ միշտ: Կարողանալու եմ երկար պահպանել յիշողութեանս մէջ: Խեղճ երեխան՝ որ ամբողջովին սէր էր և ոչին մաքրեց իր անգութ կրակով սիրելու տանջանքը, որաեղ է հանգստանուած այժմ: Սրդիօք նա չողիացաւ իբրև այս թառամած վարդերի բայրը, կամ գնաց վերաբնակելու մի այլ երջանիկ ընտկավայրուած: Ես չը զիտեմ. մենք ոչինչ չը դիտենք: Տիրութիւնս ինձ լացանել չէ տալիս, բայց ես չեմ զգուած սիրոս...:

Նա լսեց մի հեծկլտանիք և զլուխը բարձրացրեց: Անկողնու միւս կողմին նա տեսաւ ժամնիին՝ ծնկաչոք, աղօթելիս: Եւ այդ բոլէին իսկ նա զմայլուեց այդ արտասուաթոր դէմքով և նախանձեց այդ վշտի պարզութեան:

Սենեակի խորքուած, տիկիին Մէրանը նստած, հազիւ համարձակուած էր շարժուել: Նա բոլորովին շփոթուել էր իր վըշտից: Երբ նրան պատմեցին Աննիի վերջին վայրկեանները—մեղմ և հանգարա ինչպէս ամբողջ այդ գնքոյց կեանքը—կրտսէինը հեռացաւ: Եւ ճանապարհին, սիրտը խոյուած, նա զարմացաւ իր սիրոյ անդորրութեան վրայ, որ տանուած էր այդ մահը առանց բուռն գանդատի և նոյն իսկ դանուած էր այդ խորտակուած պատկերի մէջ մի անկեղծելի առաքինութիւն:

Երբ անցնուած էր Մէնթօն-Աէն-Բէրնարով, նա տեսաւ պօստանից զուրս գալիս ժակ Ալվարին, որի գէմքը յոդնած լինելով վագնուած անցրած մի զիշերից, վշտին յարմար հետքեր էր ցոյց տալիս:

—Դու զիտես գժբախտութիւնս, առաց Ալվարը նրան առաջը բանելով: Այդ խեղճ Աննին!... Այն բոլէին՝ երբ ես մինիստր պէտք է գտանամ... որքան հպարտ կը լինէր նա...!:

## VII

Գարնան արեւը լիազեղուն մտնում էր փոքր սրահը, ուր աշխատում էր կիւսիէն հալանդը: Դա նրա մօր նախկին առանձնասրահն էր, ուր բնակւում էր նախամեծարապէս: Նա կարդում էր ժամանակակից րեժիմ-ի այն էջերը, ուր Տէնը հաստատում է, որ մեր գաւառական և տեղական հասարակութիւնները չեն կարող այլ ես լինել իրանց բնակիչների համար փոքր հայրենիքներ, հպարտութեան, սիրոյ և անձնուիրութեան օրինական ասարկաներ, որովհետև նրանք մանրացրուած են իրանց վարչական կազմակերպութեամբ, իսկ այդ դնում է նրանց պետութեան ձեռքում և նրանց ներկայացուցիչները կորցրել են իրանց նշանակութիւնը ընդհանուր քուէարկութեան զաւալի հետեւանքների պատճառով, որը հրատարակել է իրաւունքների հաւասարութիւն, բայց պահպաննել է պարտաւորութիւնը:

— Այս, մտածում էր նա, կերկենալով և թողնելով զերքը, պէտք է տալ նրանց անձնական կեանք: Մի պետութեան ոյժը կազմողն այդ փոքր հասարակութիւնների աշխոյժն է, Սյարլուզաւոր ժողովուրդը, որ ասում է քրակը, պէտք է նուածել նրան, պէտք է ապացուցանել նրան աշխատութեամբ և անձնուիրութեամբ որ իր բնական ներկայացուցիչները բալոր նրանք են, որոնք ապրելով իր մօտ, այսուամենայնիւ աւելի ազատութիւն և կրթութիւն ունեն և շահամիրուած են հէնց իրանց կալուածների պատճառով, լաւացնել հասարակական վիճակը, գալով ինձ, ես կատարում եմ ինչ որ կարող եմ, իմ համայնքի մէջ, ընդհանուր խորհրդում:

Երկու բաց լուսամուտներով արեւը բերում էր գարնանային քաղցր ջերմութիւնը, խառն օդի այն կենսատու զովութեան հետ, որ մայիս ամսի հրապոյըն է կազմում: Փեղիերի մինը բացում էր մեծ ծառերի վրայ, որոնց դալար՝ տերեւները դեռ բաց չէին թողնում լոյսը: Կիւսիէնը մօտեցաւ միւս փեղկին, որ աւելի լայն տեսարան էր ցոյց տալիս: Նա զմայլումց լիի կապուտակ ջրով, որ ծփում էր առաւօտեան թեթե հովից և, աւելի մօտ, մարզագետինների քնքոյշ խոտով, որ արդէն բարձրացրել թանձրացրել էր: Տան ներքեն, գարդենինները ակսել էին ծաղկել երիտասարդը ժպատաց այդ բերկրալիք բնութեամբ:

— Ինչպէս լաւէ ապրել! այսպէս աշխարհը վերստանում է իր երիտասարդութիւնը. ես զգում եմ իմ իմ, որ ուռեցում է

կուրծքս անուրջներով, ցանկութիւններով և ոյժով, ինչպէս առաջ, տասը տարի սրանից առաջ,

Նա վերցրեց բուխարու վրայից Աննիի լուսանկարը մանկութեան ժամանակ, որ միշտ մնացել էր այդտեղը, նա ծածկուած էր քիչ փոշիով, վաղուց նրան չէր նայել:

—Վեց ամիս է անցել նրա մահուանից և ևս յիշում եմ այդ մահը իրեն մի շատ հին բան: Նրա մասին մտածելը ինձ գմնդակ չէ թւում ես դժուարութեամբ կարողանում եմ մաքրութեամբ վերաբարպես յիշողութեանս մէջ նրա դիմագծերը, բայց ինձ համար դժուարութիւն չէ նրա յիշաակով ներշնչել իմ կեանքի լաւագոյն զործողութիւնները: Հէնց այդ յիշատակը ջահիլացնում է ինձ ինչպէս մի խորհրդաւոր զարուն և փչում է իմ մէջ մարդկանց աւելի մատչելի մի հոգի:

Արեգակը հրապուրում էր զբոնելու կիւսիէնը, թողնելով իր զրբերը, իջաւ զառիվայր մարգագետինները: Երբ հասաւ սիրահարների հովանոցին, նա տեսաւ որ վարդեր են քաղել և ցանկապատի երկաթեայ թելերը փշրուած են: Բայց նա չը նեղացաւ.

—Ժամնի Մէրանը հիայած կը մնար. ահա այժմ սիրահարները կարողացել են մտնել ինձ մօտ, ինչպէս հօրս ժամանակ: Մայիս ամսուայ աղգեցութիւնն է:

Օգուտ քաղելով այդ ճեղքուածքից, նա զուրս եկաւ մեծ ճանապարհի վրայ: Վօժընիէ սօցիալիստը բաձրաձայն ճառ էր խօսում մի յոսի դէմքով ստահակի, որ նստել էր մի քարի կոյտի վրայ: Նա պոսում էր.

—Դուք արժանի չէք աղքատ լինելու!

Երբ նա նկատեց կիւսիէն Հալանդին, նա նրան վկայ բռնեց.

—Պարոն, տեսնում էք այս մարդին, որ այստեղ նըստած է: Ես կամենցայ տալ նրան զլիարկս, որովհետեւ զլիարկ չունի, բայց նա՝ մերժեց հայհոյանքներով ծիշտ է, իմ թաղեայ զլիարկս ծակելուած է. բայց ծակերը փաքը են: Այս պարոնին պէտք են ոսկեայ և մետաքսեայ զգեստներ: Ես նրան առաջարկեցի մի պատառ հաց և նա դէն ձգեց: Նա դէն ձգեց նուիրական հացը, որ կերակրում է մարդկանց և նա խնդրեց ինձանից մի հատ զրամ: Աղքատները այլ ևս չեն սիրում իրանց աղքատութիւնը: Նրանք զողանում են մեղանից, որ ապրում ենք մեր աշխատանքով և զրացիանում ենք նրանց դժբախտութեան, էժան կերպով: մեր միջոցների համաձայն, զթասիրութիւն ցոյց տալու երջանկութիւնը:

Նա մի մեծահոգի զայրոյթով բռնկուել էր: Ստահակը նը-

բան նայում էր մոռալ նայուածքով, ուր կարգացւում էր արհամարհանք, մինչ նա իր ձեռքը պարզել էր Լիւսիէնին ասելով.

— Ողսրմութիւն արէք հաշմանդամիւն

իր նայուածքով նա կամենում էր հասկացնել Վօժընիէին թէ չէր յարգում նրա ընկերութիւնը, այլ աւելի լաւ էր հարարում լաւ հագնուած մարգկանց շահաւէտ յաճախորդութիւնը:

Լիւսիէն Հալանդը, տալով նրան մի քանի գանեկան, հարցրեց նրան.

— Ո՞րտեղացի ես;

— Լօզաննից, Շվեյցարիայից:

— Պէտք է վերազանալ այդտեղ, բարեկամս, Մարդ իր երկրում աւելի հեշտութեամբ օգնութիւն կը գտնէ, Աննք այստեղ օդնում ենք համայնքի տնանկներին, մենք չենք կարող օտարի անանիներին եւս կերակրել: Համայնքը, մի մեծ ընտանիք է, որ պէտք է պահէ իր միջոցները իւրացինների համար:

Նա այս վերջին խօսքերն ասել էր իր համար և որովհետեւ մտածում էր Տէսի զրուածի մասին զաւուական կեանքի վերաբերմբ:

Նրան բարեւեցին անցնող դիւղացինները, որ տանում էին ջահիւ հորթերին դէպի սպանդանոց.

— Բարի լոյս մեր տանուտէրն

Այդ ողջոյնները ցոյց էին ատիս մի համակրական յարգանք որ Լիւսիէնը այժմ ստանում էր ամբողջ նահանգում և որը վերաբերում էր աւելի օգտակար և բարեխորհուրդ տանուտէրին, քան նոր մեքենաներով հողը շահագործող կալուածառին, որ կամենում էր սաստկացնել հողի բարգաւանդութիւնը մի նոր, մինչեւ այդ օրը անծանօթ, եղանակով:

Երիտասարդը մի քանի քայլ արեց դէպի Վօժընիէն, որ գնում էր Տալուար:

— Այս տուաւա, ասում էր սա իր սովորական շաղակրատութեամբ և յուզուելու հիանալի հեշտութեամբ, այս տուաւա, հազիւ լոյսը ծագեց, ևս իջայ Թօնից ձանապարհի վրայ վացրի վարգեր կային և օգը թեմն էր, երիտասարդութեանս ժամանակի պէտ: Չեր շագանակները, պարոն Հալանդ, տարածում են իրանց ցիւղերը օրնութեան ձեռքի նման: Եւ ես տեսնում էի լիճը որ փայլում էր արեգակի ձառագայթներից: Այդ ժամանակ ես հանեցի գլխարկս և աղօթեցի բարձր ձայնով: Սիրաս նման էր շատ լցուած կուժի, որ պէտք էր մի քիչ թափել ես չնորհակալութիւն յայնեցի Հօրը, որ այնանդ վերև է, նրան համար, որ սփոռում է բոլոր այս լաւ օգը երկրի և իմ:

վրայ, և ես առում էի. «Հայր, այդ շատ է! երկիրը երջանիկ է. ես երջանիկ եմ և ես առլիս եմ ձեզ սիրում նա չի մերժի ընծառ, ինչպէս այս աղքատը իր ծակծկուած զլխարկը».

Լիւսիէնը ճաշակում էր այդ աւարօրինակ առաքեալի ոգեսրուած ճառը, որ ինքն իր մէջ զտնում էր առատ ուրախութիւնների աղքիւր, նա թողնում էր նրան խօսել և նա ափսոսալով, կանգ առաւ Մէնթօնի տանուտէրութեան առաջ, ուր ժամադրութիւն ունէր մի ամուսնութեան համար; Վօժընիէն սեղմեց նրա ձեռքը.

—Պարոն Հալանդ, ես ձեզ ողջունում եմ, շարունակում եմ ճանապարհս դէպի Տալուար:

—Դուք մեզ թողնում էք վերջնականապէս:

—Ախ, գնում եմ աշխատելու Ալբերտիլի երկաթուղու վրայ, բոլոր արհեստները լաւ են ինձ համար. անթիւ են այն երկիրները, որոնք տեսել են պտոյտա:

—Մնացէք մեզ հետ: Այստեղ, իմ համայնքի մէջ, ամեն մարդ ձեզ ճանաչում է և ձեզ սիրում է: Ահա դրեթէ մի տարի կայ, որ թէ իրրի անցորդ, իրրե վերաբնակ. դուք ձեր զեղեցիկ պատմութիւններով հիացնում էք երեկոյեան ժողովները: Դուք այլ ես օտարական չեք մեր մէջ:

—Ոչ, ոչ, ճանապարհորդները ինձ կանչում են: Ես քարշ եմ տալիս հայրենիքս իմ կրունկների վրայ: Եւ մարդիկ ամեն տեղ եղայրեներս են:

Եւ նորից նա բանեց երիտասարդի ձեռքը.

—Մնաք բարի, պարոն Հալանդ: Ես ձեզ կը տեսնեմ կամ չեմ տեսնի, բայց ես կը յիշեմ: Ես լսել եմ ձեր զովասանքը այնպիսի բերաններից, որոնք չը ծամած կուլ են տալիս, որովհետեւ սոված են լինում՝ ուտելիս: Դուք սիրում էք փոքրիկներին վիկաօր Հիւգօյի պէս: Երկրի այս անկիւնում առանց ձեզ եօլու չեն կարող գնալ: Դուք երջանիկ կը լինէք, ես եմ տառում ձեղ այդ...:

Եւ հեռանալով, նա նետեց այս միաքը ձեռքի լայն շարժումով.

—Բոլոր մարդիկ բարի են: Երջանկութիւն՝ տալն է և երրամարդ ոչինչ չունի, ոչինչ չէ տալիս կամ տալիս է ինքն իրան:

Լիւսիէնը տեսաւ նրա անհետանալը ճանապարհի գարձուածքում և նրա ձայնը կորաւ իր ուրուագծի հետ, որովհետեւ նա շարունակում էր միայնակ խօսել:

Տանուտէրութեան շէմբին՝ մի ջահիլ զեղջկուհի արդէն թառամած, որ բռնել էր երկու երեխաների ձեռքից և յդի էր,

սպասում էր այն մարդկանց անմռունչ համբերութեամբ,  
որոնք երբէք ժամացոյց չեն ունեցել:

—Պարսն տանուտէր, ասաց նա վեհերստութեամբ, միայն  
դուք էլք պակաս Մարդու այնակ է իր վկաների հետ:

Դա ամուսինն էր, որի ամուսնութիւնը պէտք է կատարէր,  
և ազգուեց փոքրիկներին:

—Դէ լւաւ, իմ արիստիրոտ Պէրօննա, այս անգամ ամեն  
բան կարգին է. ձեր մարդը այլ ես չի թողնի ձեզ:

—Ձեզ եմ պարտական այդ, պարսն տանուտէր:

Մտնելիս նա լսեց որ իրան կանչում են և յետ նայելով,  
տեսաւ ժակ Ալվարին, որ կանգնեցրեց իր վիկորիան և ցատ-  
կեց առանց դիպչելու կառքի սանդուխին:

—Գնում էի քեզ մօտ, ասաց սա առաջ դալով, միշտ շի-  
տակ և կայտառ: Զը լինի պատահաբար քո տանուտէրութեան  
գործերը արգելում են քեզ տուն զար, սիրազ տանուտէր!

—Սյո, արգելում են ինձ, պատասխանեց Լիւսիէնը առանց  
ժպտալու: Սյո վայրկեանին ես ամուսնացնում եմ: Խսկոյն քը  
սպասին պատրաստ կը լինեմ:

Ալվարը ցոյց տուեց գեղջկուհուն չարախնդաց լոյրշու-  
թեամբ:

—Սա է հարսնացուն! թիւ, դու պէտք չես ունենալու  
պաղաբերութիւն քարոզելու: Քո զիւղացիները աճում են, այդ  
զգուելի է:

Լիւսիէնի գէմքը խստացաւ.

—Հանգիստ թող նրան: Ես շատ նեղութիւն քաշեցի միւ-  
չեւ կարողացայ պաշտպանել այս կինը:

Եւ տեսնելով որ վերջինս, բարձրանալով սանդուխներով,  
արդէն շատ հեռու էր և չէր կարող լսել, նա շարունակեց.

—Մարդը չէր ուզում նրան: Նա վախենում էր որ իրան  
կը ծաղրեն: Օտարոտի ինքնասիրութիւն! իսկ կինը սպասում  
էր նրան, խռնարձ: Նա մաշւում, հիւծւում էր իր փոքրիկներին  
կերակրելու համար:

Ժակի հոգաբ չէր ամենեւին այս փոքրիկ զբաման: Նա  
սկսեց ծիծաղել:

—Այդ փոքրիկներից անշուշտ շատ ունէր!: Աղքատ կանացք  
մի տեսակ կատաղութիւն ունեն երեխաներ բերելու:

—Նրանք միայնակ չեն անում այդ:

—Հօ երկար չի տեսի, հարցրեց Ալվարը: Ես քեզ սպա-  
սում եմ: Ես ցանկանում եմ քեզ հետ խօսել:

Մի քառորդ ժամից յետոյ երկու երիստասարդները նսաւած  
ու կաւում են, զուրուսում են: Սէնի ու հանս պարհի վրայ, դէ

պի Ավիւլիի դղեակը, ժակը զգում էր սիրտը թափ տալու այն պէտքը, որ սովորական է կեսնքի մէջ միշտ յաջողութիւն ունեցող մարդկանց, բայց իրանց յաջողութիւնը միայն այն ժամանակ են կատարեալ համարում, երբ հանրածանօթ են դառնում և նախանձի առարկայ:

—Ես հասայ Աննէսի անցեալ օրը, ասաց նա, ես սախպուած էի, սկզբի համար, պաշտօնական ընդունելութեան ենթարկուել երէլ կարողացայ խոյս տալ. ես այսօր աւարտեցի մի գործ Տալուարում:

—Ինչ կասկածելի գործ է գնացել աւարտելու, հարցրեց ինքը իրան Լիւսիէն, Տիկին Ֆերրէզին վերադարձել է, Նա գուցէ խզել է կապը նրա հետ, այժմ, երբ երկուան էլ ազատ են ամուսնանալու, Տիկինը այնքան էլ հարուստ չէ. ահա ինչ է նա անուանում գործ:

Նա նայեց իր ուղեկցին Սա յոզնած դէմք ունէր և երջանիկ կերպարանք, որ ունենում են երիտասարդները զուարձութեան մի գիշերից յետոյ:

—Կամ գուցէ նա վերանորոգել է կապը, Գուցէ երկուան էլ: Բայց նա ինձ կ'ասի: Նա ինձ խոստովանում է բոլոր իր անպիտանութիւնները և նոյն իսկ ես սաորացած եմ զգում ինձ նրա խոստովանութիւններով...:

Ժակը շարունակեց.

—Ահա վեց ամիս կայ, որ ես Սալօյա չէի եկել: Այդ խեղճ Աննիի մահուանից ի վեր...:

Որպիսի սառն անտարբերութեամբ նա արտասանում էր, այդ խեղճ Ո. Յ. Յ. !

—Վեց ամիս մինիստրութիւն, այդ արդէն երկար է այս անհանըեր և յելցեղուել ժամանակի համար:

Լիւսիէնը զգում էր, որ իր մէջ բարձրանում է մի անբացարելի սաստկութեամբ, զայրոյթի մի արհամարանք իր մասնկութեան ընկերի դէմ, որ զօտով կամնում էր իր բարեկամութիւնը նրա շլենքին վաթաթել: Նա ինքն գեռ չը զիտէր, թէ ինչպէս հայրենի հողը նուածել էր իրան և վերածել էր նրա մաքի հետաքրքրութիւնը՝ գործունէութեան, իսկ զիլէտանտիզմը՝ ուժգնութեան (էներգիա):

—Բայց ինչու է եկել ինձ տեսնելու, մտածում էր նա: Այլ եւս ոչ մի միայնող կտակ չը կայ այս վիառասիրի և իմ մէջ:

Եւ նա ասաց այն խաղաղ և քաղաքավարի ձեռվ, որ պահպանել էր իր նախկին սովորութիւններից և որ կարող էր վարագուրել իր ներքին յուզմունքները.

—Վեց ամիս մինիստրութիւն, որի ընթացքում դուք մի-

ջոց գտաք աւելացնել հարկերն ու պաշտօնեաները և հարուած հասցնել ամենամութիրական ազատութիւններին: Բանուորներին օդնելու նպատակով, դուք առաջարկում եք մի անգործագրելի օրէնք աշխատութեան արկածների մասին, որ կը ծառայէ ի վեսո նրանց, որոնց համար կազմուած է, ընտանիքի հարցերի դէմ ի նպաստ ամուրիների և օտարականների, որոնց արկածները աւելի բիշ թանգ կ'արժենան տէրերին: Յիրաւի, դուք մի շատ գեղեցիկ գործ եք կատարում:

Ժակը դիտեց նրան ապշած.

—Զը լինի դու քաղաքական հոետոր գարձար այն օրից ի վեր, երբ ընդհանուր խորհրդական ընտրուեցիր:

—Ոհ, ես հոետոր չեմ և ես ատում եմ բոլոր հոետորներին: Ճշմարտութիւնը պէտք չունի ճարտարախօսութեան և մարդ միշտ լաւ է խօսում, երբ մի բան է ասում...

Եւ գրգռուած իր խօսակցի ապշութեամբ, նա չարունակեց.

—Դու չէիր սպասում, կարծում եմ, իմ հաւանութեան Պաշտօնը ինձ չէ շլացնում. ես ի նկատի ունեմ միայն պաշտօնակատարի գործողութիւնները, Մինիսարը թող լիի ճշմարտութիւնը, որ ես պարտաւոր եմ ասել իմ դպրոցի ընկերին: Երկու տարի առաջ ես տուի իմ անունը, ծնողներիս անունը, քո ազատամտական ծրադրին, քո թեկնածութեան ժամանակի: Դու մեզ խօստանում էիր այն ժամանակ կարգի և տնտեսութեան բէժիմ և պ. Մէրանի պահանջի համաձայն, որ քիչ գրաւող էր և անպայման ապակենդրոնացուցիչ, մի աւելի ամուր զլուխ և աւելի սակաւ կապկած անդամների: Դու հրատարակում էիր արդիւնագործ համայնքներում մի օրէնք ընկերութիւնների մասին, որ պէտք է հակակրչութիւնը փողի ոյթը և հարստութեան կուտակումն: Բայց այժմ դու գարձել ես անողոքելի մինիսար մի աղանդաւոր կառավարութեան, որ մի խարուսիկ հաւասարութեան անունով, ջընջում է աշխատութեան և ուսման ազատութիւնը, մինչև որ կարողանայ ձեռք տալ նաև բոլոր անձնական և հողային ազատութիւններին:

Ժակը, ապշած, կամեցաւ ծիծաղով ընդունել կծու քննադատութիւնը:

—Խտրութիւն անենք, խարութիւն: Կանդիդատը՝ պատգամաւոր չէ. պատգամաւորը մինիսար չէ: Կանդիդատը ստրուկ է, պատգամաւորը սպասաւոր է և մինիսատը տէր է: Մարդ փոխուում է որչափ աւելի է բարձրանում սանդուխով:

—Այս, ասաց կիւսիէն կարուկ կերպով, կապիկը որքան աւելի վեր է ենում, այնքան աւելի է ցոյց տալիս իր յետոյքը:

Ավագարը արժանի համարեց ժպտալ. նա եկել էր ինդրելու իր բարեկամին մի ծառայութիւն մատուցանելու իրան, ուստի հաշում էր, որ այդ ծառայութեան համար կարելի է տանել մի քանի իրայթոց: Լիւսիէնը, որ համացել էր այդ, ի չարն էր զործ դնում:

—Ոհ, ես մտածում եմ երկու տարուց ի վեր, ասաց նաև Ամեն բան նորից պէտք է շինել մեր գեմօկրատիայի մէջ, վերեւից ներքեւ: Համայնական ազատութիւնը, օրինակ, որպէսի չար կատակ է: Մենք ունենք մի տանուտէրութիւն Մէնթօնում, որ պահանջում է մի կարեւոր նորոգութիւն, առանց որի կարող է քանդուել: Զարիքը գեռ ուղղելի է, վաղն այլ եւս շի լինի: Քուէարկել տուփ մի փոքր գումար իմ տանուտէրուկան խորհրդի համար, բայց նահանգապետութեան մէջ ջնջեցին ելեմտացոյցից: Աննէսիի այդ պարոնները, որ չեկան տեսնելու իրանց աշքով, այդ ծախքը աւելորդ են դատել: Եկող տարի, մենք պէտք է փոխառութիւն անենք ամբողջ շինութիւնը նորից կառուցանելու համար: Նահանգապետն է, նոյն իսկ ոչ նահանգապետը, այլ որ և է մի բաժնի պետ կամ պետի օգնական, որ կառավարում է, նոյնպէս վատ, նահանգի երեք հարիւր համայնքները:

—Այդ շատ ցաւալի է, հաւաճութիւն տուեց Ժակը:

—Առաջները, Ամփօյում կար համայնքների համար մի խորհրդական, Դա մի փաստաբան էր կամ մի նօտար որ հինդ կամ վեց համայնքի հաւատարմատարն էր: Բայց պետութիւնը այսօր գրաւել է ամեն բան, բռնել է բոլոր իշխանութիւնները, նա ջնջել է առաջուայ զօրաւոր մարմինները, ընկերակցութիւնները, պարլամենտները, գաւառները, Կուսակալութիւնը, նահանգը, միայն արուեստական կենանք ունեն: Դրանք դիակներ են, որ կառավարութիւնը գալուանացնում է շարժման առերեւոյթականութիւն տալու համար: Աւելի բնական կերպով կազմակերպուած համայնքը նոյնպէս սեսիական գոյութիւն չունի, նա ոչ իր ֆինանսների, ոչ իր դաստիարակների ընտրութեան տէրը չէ: Պետութիւնը դարձրել է անհատին լոկ մի կրաւորական հարկատու: Մենք պէտք է վճարենք միայն առաջարկած հաշիւը, որ շատ թանկ է....

Կառքը կանգ առաւ դղեակի առաջ: Կէս օր էր գրեթէ: Սանդուխի վրայ, Լիւսիէն Հալանդը խօսում էր միշտ մղելով իր առաջ կառավարութեան ներկայացուցին:

—Եւ ընդհանուր քուէարկութիւնը! ոհ, գեղեցիկ մեքենայ, որ շինուած է վատնողութիւն, ախտաժէտութիւն և անկարդութիւն տարածելու: Հարիւր տարի պէտք է նրա կրթութեան

ձեռնարկելու համար և հէնց առաջին անգամից արքեցնում են նրանով ժողովրդին իբրեւ մի թունդ զինիով։ Այդ ժողովուրդը ունի, պէտք է ունենայ բնական ներկայացուցիչներ, նրանք որ ամենից շատ են վճարում, նրանք որ ժամանակ, կրթութիւն, իմացականութիւն և շիամակութիւն ունեն։ Զը կայ կինոսւնակ դէմօկրատիքա առանց մի զեկավարող դասակարգի և ճանաչուած իբրև զեկավարող։

Նա փակեց սաստիկ տաք արեւի դէմ առանձնասենեակի փեղկերը, ուր մտել էին. ապա վերցրեց սեղանի վրայից Տէնի հատորը և կարդաց.

—Ժողովրդական քուէարկութիւնը, որ «մի տղէտ, անուշադիր և անտեղեակ միջնորդ է, մի կանխակալ և կրքոտ զատաւոր, մի բարոյագէտ լայն խթճմտանքով, փոխանակ պահանջելու անարատ պատուաւորութիւն և ապացուցուած ձեռնամսութիւն, պահանջում է մրցակիցներից միայն հոեւտորական շաղակրատութիւն, իրան առաջ մղելու և հասարակութեան ցոյց տալու ճարպիկութիւն, կոպիտ շողովորթութիւն, եռանդ ի ցոյց մարգկան և խոստումն՝ դործ դնել ժողովրդի իրան յանձնած իշխանութիւնը իր հակակրութիւնների և նախապաշարումների օգտին»։

—Ի՞նչ է նպատակը, հարցնում էր ինքն իրան Ալվարը, որ համարում էր ընդհանուր իդէանները լոկ իբրեւ մի հողմանար, որի ետեւ կարելի է ծածկել զէմքը, նպատակը կամ ցանկութիւնը։

Նա ասաց ժպտալով.

—Ի՞նչպէս դու սիրահարուել ևս այնպիսի բաների, որոնք որ և է շահ չեն ներկայացնում քեզ համար, ինդհանուր քուէարկութիւնը, ամեն բան նրան ծառայեցնել իմանան է։ Նա այնքան ամուլ չէ. նրանից կարելի է մինխատրութիւն հանել, երբ մարդ ճարպիկ է։

Լիւսիէնը նայեց նրան.

—Ո՞վ է քեզ հետ խօսում անձնական շահի մասին, Խօսքը այն ամենի մասին է, որ սպանում է Ֆրանսիան, և դու ցոյց ես տալիս ինձ քո անձու Ո՛հ, դու շարժուամ, յուզում ես քեզ համար. դուք ամենքդ այդպէս էք, դուք, այսօրուայ քաղաքական գործիչներդ Դուք ձեր օգուտը համարումէք երկրի օգուտը և քաղաքակրթութիւնը միայն այն ժամանակ է պտղաբեր, երբ դուք հնձում էք, Տէնի մի խօսքն ես կայ ձեզ համար, ահա. «Որչափ մի մարդ միայն իրանով, իր բախտով, իր առաջնացութեամբ, իր անձնական ու սեպհական յաջողութեամբ է հետաքրքրում, նա շատ քիչ բանով է հետաքրքրում. այդ բոլորը

շատ սակաւ և կարձատեւ կարեւորութիւն ունի, ինչպէս ինքը  
մարզը։

Յարձակումն խիստ էր։ Ժակը վճռեց դէմ զնել։

—Դու զեղեցիկ թէօրիսներ ես կառուցանում, բայց դու  
գործում ես ամեն մարդի և զանակով։ Ինչպէս մենք ամենքս,  
դու ես շողաքորթում ես ընտրողին խոստումներով՝ տանուաէր,  
ընդհանուր խորհրդական և ով զիտէ էլ ինչ դառնալու, գուցէ  
պատգամաւոր, եթէ ես առաջարկեմ ինձ Պարփղի ուրկայա-  
ցուցիչ։

—Ե՞ս։

—Այո, զու։

Սպասաւորը ծանուցիւ էր Լիւսիէնին որ նախաձաշն պատ-  
րաստ է, բայց երիտասարդը կանգնեցրեց ժակին, որ իր սովո-  
րութեամբ, ասանց քաշուելու, ուղղում էր դէպի սեղանա-  
տունը։

—Ես այդ պաշտօնները ընդունել եմ հարկադրուած և  
ստիպանօք և որպիշեաւ պ. Մէրանը համկացը ինձ թէ ես  
պարտաւոր էի կատարել այդ պաշտօնները, քանի որ չը կան  
ուրիշ աւելի հմուտ և աւելի անշահասէր մարդիկ։ Եւ ես չնմ  
թոյլ տայ ոչ ոքի տսել, որ ես իմ ընտրութիւնը ձեռք եմ բերել  
խոստումներով և շողաքորթութիւններով։ Զեր հին օյինները ինձ  
չափաղանց զգուցեցնում են։ Ես փորձում եմ մի նոր մէթօդ, որ  
է տալ ժողովրդին ճշմարտութիւն՝ ստութեան տեղ, ցոյց տալ  
նրան իր թուլութիւնները, իր մոլորութիւնները, զեկավարուե-  
լու կարիքը, բացատրել նրան աղքի կեանքը բաղդատելով իր  
սեպհական կեանքի հետ, ամենովենայ օրինակներով։ Որովհեանու  
ընդհանուր քուէարկութիւնը մի կատարուած չարիք է, պէտք է  
դեռ աշխատել բարտոքել նրան։ Ես ջանքեր եմ գործ դնում կըր-  
թել և այս երկրի դիւզացիններին։ Ես խօսում եմ նրանց հետ  
ընտանեաբ, ամեն անդամ մի փարբաթիւ խմբի։ Քիչ քիչ նը-  
րանք վատահութիւն են տածում...։

Ալմարը չէր ճանաչում այլ ես իր բարեկամին, որին հա-  
մարում էր անդամնալի կերպով անհոգ և սկեպտիկ։ Եւ այդ ոչ  
թէ այն պատճառով որ նա մազաշափ գնահատում էր այդ  
քաղաքական վիճաբանութիւնը, ոչ նա բանի տեղ չէր զնում  
իրէանները, այլ այն պատճառով, որ նա տեսնում էր իր զիմաց  
մի նոր, անակնկալ և հակառակորդ ոյժ։ Նա վտանգուած էր  
տեսնում իր տիրապիտական ձգառմները, նա դարձեալ կատա-  
կի ձգեց և ասաց ծիծաղելով։

—Հաւատոս վլիայ, դու կարծեմ պատրաստ ես և ինձ հետ  
մրցելու առաջիկայ ընտրութիւններին:

—Անտարակոյս:

—Ոհ, ասաց ժակը, այս անգամ աւելի շահագրգռուած,  
որովհետև ինդիրը եր մասին էր:

Եւ նա աւելացրեց, պահելով իր ժպիտը.

—Ես քեզ այդ նեղութիւնը չեմ պատճառի: Մինխատը լի-  
նեմ թէ նախկին մինխատը, չեն համարձակի ինձ դէմ կանդի-  
դատներ հանել: Ամենակատաղի ազատամիտներին, քո բարե-  
կամներին, ևս շքանշանով կը վարձատրեմ և նրանք իմ ծառա-  
ներս կը դառնան:

—Ոչ, հաստատեց լիւսիէնը ուժգնութեամբ, դու անցել  
ես մի բանակից միւսը, դու դաւաճանել ես քո ընտրողներին,  
դու այլ ես չես կարող նրանց ներկայացուցիչը լինել պարլա-  
մենտում: Եթէ ուրիշներ չը լինեն, դու քո դէմ մի մրցակից կը  
գտնես:

—Եւ ով կը լինի նա:

—Ես:

—Զգուշացրուած մարդը երկու մարդ արժէ:

—Ոհ, ես ամեն բան օր ցերեկով եմ կատարում: Ես ամե-  
նեւին չեմ ցանկանում պատգամաւոր լինել: Այդ մի այնպիսի  
արհեստ է, որին այսօր պարկեշտ մարդիկ շատ քիչ են հետա-  
մուտ, Բայց ես յիշում եմ, որ իմայինները զեկավարել են այս  
երկիրը, առաջներում, բարեխզճաբար: Իմ ընտանիքով, նոյն իսկ  
իմ շահերով ես մինն եմ իմ այն բնական ներկայացուցիչներին  
որոնց մասին խօսում էի այս բոպէիս: Ես չեմ կարող այդ մո-  
ռանալ...:

—Բայց դու այս չէիր յիշում Պարիզում:

—Սխալում էի, ես փոխուել եմ: Դու չես կարող հաս-  
կանալ հայրենի հողի ոգին: Դու եկել ես այստեղ պատահմամբ:  
Երբ ես վերադարձայ, դու ինձ անուաննեցիր օտարական, վե-  
րադարձնում եմ քեզ խօսք, քեզ, որին ոչ մի կապ չէ կապում  
այս երկրի հետ և որը չը կարողացաւ առաջնորդել նրա դիւ-  
րահաւատ և խաղաղասէր հոգին: Ես գտնում եմ որ քո գոր-  
ծունէութիւնը չարաբաստիկ է. ես պարտաւոր եմ կոուել նրա  
դէմ:

Եւ աւելի սիրալիր դառնալով այդ յայտարարութիւնից  
յետոյ, ցանկանալով ցրել իր հիւրի ստացած ծանր տպաւորու-  
թիւնը, նա մտցրեց ժակին սեղանատուն և, չը նայելով այդ  
բոլորին, սկսեց հետաքրքրուել նրա մինխատրական գործունէու-  
թեամբ: Քաղաքավարութիւնը մի այնպիսի տարօրինակ իշխա-

նութիւն ունի, որ ստիպում է մեզ ճաշի հրաւիրել նրանց, որոնց հեռանալը սաստիկ ցանկանում ենք: Ճիշտն ասած՝ Ալվարը ինքն իրան էր հրաւիրել. նա հաւատացած էր, որ իրան հաճութեամբ կը ընդունեն: Մի բոպէ մոտիւն, նա շուտով վերստացաւ իր ուրախ տրամադրութիւնը: Մի ուրիշը, նոյն իսկ աւելի սակաւ իմացական և սակաւ զործունեայ կեանքի ընթացքում, բայց աւելի սակաւ անձնասէր հասկացած կը լինէր այն աշխատութիւնը, որ կատարուել էր Լիւսիէնի մտքի մէջ. բայց նա, միայն մի բոպէ անհանգստութիւն զգաց. նա վստահ էր իր ճանաչած Լիւսիէնի վրայ, որ խաղում էր իդէաներով առանց զործողութեամբ արտայայտելու նրանց, լոկ մշակուած մտքի զուարծութեամբ. այդպիսին երբէք չէր կարող նրա կարծիքով ոսոխ լինել: Այդպէս նա ընթանում էր գէպ իր կորուսը, մեծապէս վստահ իր ոյժի վրայ, և հէսց այդ վստահութեամբ պէտք է ոչչանար այդ ոյժը:

Եւ ուտում և խմում էր մեծ ախորժակով: Լիւսիէնը նայում էր նրան հետաքրքրութեամբ, որպէս թէ գեռ ուսումնասիրում էր նրան և լցնում էր նրա բաժակը բօմանական ընտիր գինով: Աղանդներին՝ Փակը, որ իր կառքն յետ էր ուղարկել, հարցրեց նաւերի ժամացոյցը:

—Աննէսիի թէ Տալուարի համար:

—Օհ, Աննէսիի համար. Տալուարը, վերջացաւ:

Եւ նա մի խորհրդաւոր ժպիտ ունեցաւ: Ապա նա յանկարծ դիմեց այն տեսակ մի խոստովանութեան, որ իր ցինիդով դիպչում էր Լիւսիէնի փափկանկատութեան:

—Տիկին Ֆերբէզին անտանելի է դառնում: Ես նրան ուղարկեցի Պարիզից, խոստանալով միանալ նրան Տալուարում իր փոքրիկ ճպնարանում: Եւ իրօք գնացի այդտեղ: Այժմ նա ազատ է: Խեղճ կին: Սստուած իմ, որքան զժուար է շատ սիրուած լինել և ինչպիսի ձանձրոյթ կարող են տարածել դիւրազգայուն անձինք: Երեակայիր, որ նա մտքումն գրել էր ամուսնանալ ինձ հետ:

—Այդ շատ բնական է:

—Դու գտնում ես: Ի՞նչ կարող էր նա բերել ինձ համար, ասա, ինդրում եմ: Անշուշտ, ոչ նորութիւն, թէ նա հաճելի է սիրահարական տոփանքի մէջ...

Եւ նա նորից ժպտաց, մտածելով նախընթաց գիշերուան, որովհետև նա ունեցել էր այդ զգացած և նուրբ անդժութիւնը յայտնելու իր սիրուհուն միայն առաւօտեան իր արձակուրդը և սեղմելու իր բազուկների մէջ նրան, որին արդէն արտաքսման էր դատապարտել:

Նա շարունակեց:

—Գարով հարստութեան, նրա անպիտան մարդը գարշելի կերպով զրկել է նրան ժառանգութիւնից:

—Ուրեմն դու չես կարող թողնել նրան:

—Ոհ, նա ապրելու միջոց ունի: Շատ ճիշտ է: Պէտք է ամուսնանալ հարուստ կանանց հետ: Հարուստ չեղողները, ութ օրից յետոյ, նոյնչափ պահանջող են դառնում որչափ հարուստ ները: Ես չեմ կամենում լինել այն պատգամաւորներից, որոնք կերակրվում են պարլամենտի բուհէտում և տանում են նրա լուացարանից երեսարքիներ իրանց ճերմակեղէնը լրացնելու համար: Ես մի օր կը թողնեմ մինխօտրութիւնը, բայց ես չեմ թողնի մինխարավայել ապրուստի եղանակը:

Այդ եռանդուն, հուժկու և գործունեայ երիտասարդից Պարիզը շինել էր հեշտութեամբ մի փափկասուն վայելչասէր: Նա հետամուտ էր և փառասիրութեան, և գուարծութեան: Եւ, իրողապէս, նա կարծէք ձեռւած տաշուած էր թէ կանանց և թէ տղամարդկանց տիրապետութեան համար:

Առանց խօսքը փոխելու, նա շարունակեց:

—Պէտք է որ դու օգնես ինձ մօտենալ Մէրաններին:

Լիւսիէնը ականջը տնկեց.

—Ահա, մտածեց նա, Նրա այցելութիւնները միշտ մի նապատակ ունեն. նա ընդունայն չէ եկել ինձ տեմնելու: Ի՞նչ տեսակ խաւարին գործի համար պէտք ունի Մէրանների աջակցութեան: Այս բոպէիս նա խօսում էր ամուսնութեան մասին և չէր յիշում նոյն իսկ որ ամուսնացած էր Աննիի հետ:

Նա պաասախանեց, ոչ առանց մի փոքր հեգնութեան.

—Ես կարծում էի որ քո յարաբերութիւնները նրանց հետ ընտիր էին մնացել:

—Ոչ, ասաց Ժակը, պաղութիւնը կայ մեր մէջ: Քեզ հետ ես անկեղծ եմ. դու քան տարուայ բարեկամ ես: Տիկին Մէրանը ինձ դիտում է միշտ բարեհած և արտասուաթոր աչքով: ունենալ մինխստը փեսայ. նա շոյեկան է համարում: Եթէ միայն նա լինէր, ամեն բան լաւ կը գնար: Բայց նրա ամուսինը ինձ նայում է անվատահութեամբ և շատ սակաւ անգամ մի քանի պաղ խօսքերի է արժանացնում ինձ: Նա փոխուել է, Մէրանը.. նա նիհարացել է և ճերմակել: Նա այժմ մի ծերունի է: Երէկ ես նրանց այցելեցի: Ես ծաղիկներ տարայ Աննիի գերեզմանի վրա դնելու:

—Տալուար գնալիս:

—Տալուար գնալիս:

Եւ երիտասարդը չը հասկացաւ որ այդ հարցմունքը շեշտում էր բարեպաշտ ու փատազնացութեան և սիրահարական ժամագրութեան խառնուրդի անպատճհութիւնը:

—Ամեն ամիս ես ծաղիկներ էի ուղարկում: Ես շիտակ եմ եղել...

Նա խօսում էր շիտակութեան մասին այն հեղ, փոքրիկ Անսիի վերաբերմամբ, որ մենել էր սիրոյ պակասութիւնից: Սպա, վերադառնալով իր առարկային:

—Այս, պ. Մէրանը ինձ ցոյց է տալիս մի հակակրութիւն, որի մասին չեմ կարող սխալուել Նա մեծ յարգանքով է վերաբերում քեզ: Խօսիր նրան իմ մասին: Մենք չենք պատկանում մի և նոյն քաղաքական կուսակցութեան, բայց մենք հին ընկերներ ենք, հին բարեկամներ:

—Պ. Մէրանը ինքն է կաղմում իր կարծիքները. նա ուրիշներին վեր չէ առնում, ինչպէս անձնաւորութիւնների, այնպէս և թէօրիաների մասին:

—Այնուամենայնիւ, պէտք է նրա հետ խօսել: Մարդկարող է յարգել և նրանց, որոնք իր հետ համախոհ չեն: Ես երեսուն և չորս տարեկան եմ և արդէն մինիստր եմ, այդ հազուագիւտ է:

—Բայց վերջապէս, ինչի՞ համար ես ցանկանում որ քո ներբողդ անեմ:

—Ահա, իսկոյն կասեմ:

Առանց երկար կեղծելու, նա աւելացրեց,

—Գիտես որ ժամանի Մէրանը շատ սիրունացել է:

Սոյ անունը լսեց թէ չէ, արիւնը ցայտեց Լիւսիէնի երեսին: Ալվարը, որ բացատրում էր իր յատակապիծը, չը նկատույ այդ: Լիւսիէնին թուաց որ յանկարծ մի մեծ վտանգ սպառնում է իրան: Սակայն Ալվարը շարունակում էր վստահարար:

—Հիանալի է, այդ փոքրիկ ժամանին. նա համարձակ է. Նա շատ լաւ կընդունէ հիւրերին: Ո՞վ գիտէ, ապագայում, երբ ժամանակը իր գործը կատարած կը լինի... Ես պէտք ունեմ մի օջախի: Երբ մի մարդ իր առաջին կինը կորցնելու դժբախտութիւն է ունեցել, այնպէս է թւում որ անհաւատարմութիւն չէ ամուսնանալ նրա քրոջ հետ:

Լիւսիէն Հալանդի թշնամական վերաբերմունքը կամ գոնէ նրա անտարբերութիւնը, որ ժակը զգացել էր անորոշաբար նրա առաջին պատասխաններից, դարձնում էր վերջինիս անխոհեմ: Նա շաղախում էր իր առվորական ցինիզմը այնպիսի գոեհկութիւններով որ ատում էր և որոնց գործած տխուր ազգեցութիւնը նկատում էր հետզհետէ պատմելիս:

իսկ կիւսիէնը կամենում էր արտասանել այս ճշմարփա խօսքը՝ իր հիւրի շաղակրատութիւնը կարճ՝ կտրելու համար,

—Այո, այդ փոքրիկը երկու անգամ կունենայ իր քրոջ հարստութիւնը:

Բայց խօսքերը չէին հասնում նրա զբժունքներին: Ժակի նպատակը նրան պարզ էր երեւում ցերեկի պէս, այս է՝ իր բարեկամի՞ միջոցով յազդել պ. Մէրանի դիմադրութիւնը—և սա, հիւանդ իր անդրանիկ դստեր մահուանից ի վեր, զուցէ երկրորդին երկար ժամանակ պաշտպանելու ոյժ չունենար.— Թող... վչելու տիկին Մէրանի աչքին, դիւրահաւատ և լացած պետական մարդի փայլով. Ժաննիի աչքին, որին զուցէ նոյն պէս հեշտ լինի մոլու եցնել, ինչպէս այն խեղճ Սննին, որ շատ վատ պաշտպանուած էր իր չափազանց զգայուն սրտի պատճառով: Ժաննին միակ ժառանգուէին Սավօյի ամենագեղեցիկ հողային հարստութիւններից մէկի, նախանձելի հարսնացու էր նոյն իսկ մի մինստրի համար, մանաւանդ մի այնպիսի մինիստրի, որ կոչուած էր շուտով թողնելու իր պաշտօնը:

—Այդ մտածում էր երիտասարդը, երբէք թոյլ չեմ տայդա գարշութիւն կըլինի:

Նա իրան հարց չէր տալիս թէ ինչ իրաւունքով պէտք է միջամտէ, նա գործում էր մի ինքնաբուղլա զայրոյթի ազգեցութեամբ, որի պատճառն որոնելու ժամանակ չունէր: Նրա քունքերը խփում էին և նա սրտում մի յանկարծական չերմ էր զգում: Սակայն նա լուռ էր, մինչ ժամկը պնդում էր որ իր աշակցութիւնը տայ պ. Մէրանին համոզելու համար:

—Ոհ, ստիպողական չէ: Դեռ ժամանակ շատ կայ այդ ծրագիրը իրագործելու: Դու հաօկանում ես, որ ես չեմ կարող մտածել վերամուսնանալ, մինչև որ սուզի տարին չանցնի: Բայց վերջապէս, պէտք է պատրաստել ձանապարհները: Այդ նորասի աղջկան շատերը հետամուտ կը լինեն իր հարստութեան պատճառով: Հարստութիւնը այնքան մեծ դեր է խաղում այսօրուայ հարսնիքների մէջ...:

Նա մի գլուխ խօսում էր և խօսում, ասելով այնպիսի կլորիկ ֆրազներ, ուր կրկնում էին իր «նախկին վիշտը» և իր «նոր յոյսը» խօսքերը:

Ցանկարծ, կիւսիէնը վեր կացաւ և ընդհատեց նրան.

—Լուր, սիրելիս, ինչ որ պէտք է քեզ ասեմ կարճ է և վճռական: Ոչ միշայն ես գործ չեմ գնի իմ վարկս պ. Մէրանի մօտ որ դու նրա առաջ չնորհ գանես, այլև երդւում եմ որ եթէ դու երբէք յանդկնութիւն ունենաս խնդրել օրիորդ ժաննի Մէրանի ձեռքը և եթէ նրա հայրը քեզ այդ ձեռքը տալու

յանցաւոր թուլութիւնն ունենայ—և այդ անսպասելի է—ես կը հաղորդեմ օրիորդին տեղեկութիւններ քո անձի և կեանքի մասին:

Ժակը լպրօրէն գրեց միակնոցը նրան նայելու.

—Դու գծւում ես!

—Ոհ, ոչ! Դու իսկ խառնեցիր առաջներում քո բնարիզներին և ես չէի կարող չը զիանաւալ տիկին Ալվարի ասնջանքները: Այս անդամ, ես քո մեղասկիցը չեմ դառնայ: Եւ յետոյ, դադարենք միմնանց հետ գուշառվ խօսել, որ ծաղրելի է այնպիսի մարդկանց մէջ, որոնք չունեն ոչ մի համ ընդհանուր մտածմունք և զգացում:

Ժակը նոյնպէս վեր կացաւ տեղից: Երկու տղամարդիկ իրար դէմ յանդիման կանգնեցին: Ալվարը այպանում էր.

—Ախ, դու այդ ջահիլ աղջկայ չուրջն ես պտառում: Պէտք է յայտնէիր ինձ, դու հոտոտում ես օժիտը: Չեռքիցդ բաց թողնելով առաջինը, դու երկրորդի ետեւից ես ընկել:

Լիւսիէնը զանգը տուեց ծառային կանչելու համար և առաց պարզաբար:

—Նաւակի ժամն է:

Ժակը շարունակում էր, գտնելով իր ինքնակստահութիւնը:

—Դու կամնենում ես կրտսերի միջոցով հանել վրէժդ անդրանիկի ցոյց տուած արհամարհանքների մասին: Կը տեսնենք, բարեկամու Յայտնել ես նրան, այդ քո փոքրիկին, այն պչրանքը, որ անում էիր ինսօն: Դու կարծում էիր, որ ես ոչինչ չէի տեսնում: Մենք ծաղրում էինք քեզ միասին....

Ծառան երեւացել էր Լիւսիէնը նշան արեց.

—Առաջնորդեցէք պարոնին:

Եւ երկու նոր թշնամիները ուղղեցին միմեանց մի վերջին ողջոյն:

Միայնակ, Լիւսիէն Հալանդը երկար ժամանակ ման եկաւ սրահում: Նրան անհանգստացնողը ժակի վերջին խօսքերը չէին, Անսիին վերաբերեալ, այդ խօսքերը այնքան կոպտաբար սուտ էին, որ նա ոչ մի հաւատ չէր ընծայում նրանց: Բայց նա ինքըն իրան հարցնելով թէ ինչ պատճառով այդպէս վճռողաբար արտաքսեց իր նախկին բարեկամին, ոկուում էր պարզ տեսնել իր սեպհական սրտի մէջ: Այն միակ միաքը թէ ժակ Ալվարը կարող է մի օր կնութեան առնել ժաննի Մէրանին, տակն ու վրայ էր անում նրան: Այսպէս, յաճախ անակնկալ պարագաներ պարզում են մեր զդացումները. միայնակ մեզ հետ, մենք նրանց կը պահէինք առանց ճանաչելու նրանց: Ինչպէս թսն-

կադին ոգիներ (essence), որոնց անուշաբուրումն մեզ անծանօթ մնացած լինէր:

— Արդեօք սիրում եմ նրան, ասում էր ինքն իրան, Սիրում եմ նրան այն աստիճան, որ չեմ կարող տանել նրա ուստիշի հետ ամուսնութեան հեռանկարը, Այդ միտքը որ պէտք է ինձ ուրախ դարձնէր իրրեւ իմ երիտասարդութեանս վերադարձը, խառնում է նրա քաղցրութեան՝ մոխրի մի օտարոտի համար և աման է այն ծաղիներին որ բուժնում են զերեզմանների վրայ: Նրանց ծննդեան տիրութիւնը իրանց մէջ է գտնվուել: Միայն վեց ամիս է անցել Աննիի մահից և նրա յիշատակը չէ տալիս ինձ այն գառնութիւնը, որ գրուած է սիրոյ ափսոսանքներին...:

Նու յիշեց այս վերջին պոսյտը լճի վրայ, երբ ջանիլ կինը հեռացրել էր իրանից նրա զորովանքը մասուցանելու համար նրան, որին դուցէ այսօր սիրում էր: Եւ նա մտածեց:

— Զէ որ նա, Աննին, ուզեց այդ:

Միտքը յուզուած, նա իջաւ ծառաստանը: Երեկոն մօտենում էր զանդաղաբար: Գրեթէ կանոնաւոր ընդմիշումներով հոգ զեփիւաք փչում էր դաշտի վրայ:

Նա անցաւ գաշտերով և այգիներով: Յորենի կանաչ հասկերը, իւղու խոռոք, ծաղկած պատղարեր ծառերը հաստատում էին հողի բնդմաւորութիւնը: Նա կանգ տռաւ մի բոպէ ուրախանալով տպագայ հունձերի յոյսով: Ապա նա վնաց սարի կողմը, անտապի եղրը: Այդտեղ, երկու պատկառելի կազնի զիք բարձրացել էին դէպի երկինք իրանց կնճառու կօճղերով և հուժիու ձւողերով: Նրանց տերեւները խառնում էին զարնանային կանչին՝ պղնձի և ժանզի գոյներ: մատաղ տերեւները ծլում էին երր գեռ նախորդ եղանակի տերեւները չէին թափուել և լիւսինը մտածեց:

— Այսպէս մեր նոր զգացումները չեն սպասում հսկերի մահուան՝ մեր մէջ ծաղկելու համար:

Նա մտածում էր ժաննի Մէրանին:

Նրա շուրջը, ամբողջ ընութիւնը գարուն էր ներչնչում: Կեանքը երգում էր խոտի ծիլերի և շագանակի մեծ ծառերի մէջ: Նա հասաւ մարմարեայ կոթողին, որ կիսովի ծածկում էր նոճիների շարքը: այդտեղ, նա կամեցաւ մտքերը հաւաքել, բայց մշակուող հողի անդարսում ժխորը հաճնում էր մինչեւ դամբարանը և իր սրտում նա լուսում էր կեանքի այդ մի և նոյն երգը, որ բարձրանում էր երկրից, միայն այդ երգը խառն էր ցանկութեան խանդալից տիրութեամբ:

— Այո, ասում էր ինքն իրան, այս երկիրը վերանորոգեց

երիտասարդութեանս հետ գոյութեանս իմաստը: Եւ ես տանջում եմ իմ ամուլ առանձնութիւնից: Ես չեմ կարող այլ ես ապրել առանց սիրոյ: Բոլոր ոյժերս, ամբողջ էութիւնս, աղաղակում են դէպի այն տեւական և բեղմնաւոր սէրը, որ կը հաստափի ուրախալի իրազաղութիւն իմ օջախում և կը յաւերժայնի իմ ցեղը: Ես պէտք է ապրեմ հողի այս անկիւնում, կենդանութիւն տամ այս կալուածին, սովորեցնեմ իմ շուրջս այս հեղ գիւղացիներին: Ապագայում, ես կը սովորեցնեմ իմ երեխաներին հայրենի հողի առաքինութիւնը: Եւ իմ կեանքը այսպէս գեղեցիկ կը լինի....

Նա սկսեց ժպտալ ժաննիի պատկերը իր սրտումն էր: Նա զիտէր որ ժաննին սիրում էր իրան: Չէ որ Աննին իմաց էր տուել և չէ որ ուրիշ մանր ու նպաստաւոր նշաններ էլ հաստատում էին հանգուցեալի այդ վերջին խօսքերը: Այդ լոակեաց սէրն է—սէրը, որով ոչ մի սիրուած եակ ազատ չէ սիրուելոց —որ, քիչ քիչ, նուածել էր նրան: Մի նոր թարմութիւն զարդարում էր նրա զգացումները: Անցեալի ոչ մի դառնութիւն չէր մնում նրա մէջ, ինչպէս այդ պատահում է այն մարդկանց, որոնք շատ են զուարճացել և ապա չնչում են ընտանեկան գորովանքի մէջ թառամած երկրի կծու բոյը: Աննիի յիշատակն անզամքաղցը էր իրան: Մի խորհրդաւոր օրէնքով, որ ցոյց է տալիս մարմնաւոր կատերի տեւական կարեւորութիւնը, մենք մոռանում ենք աւելի շուտ այն կանանց, որոնց սիրել ենք առանց ունենալու: Նրանք մշուշապատ են դառնում, ապա ջնջըւում մեր յիշողութիւնից, որ այլ հո վշտալի չեն դարձնում: Չիրականացած սէրը չէ պեղում խոր գծեր, ինչպէս այն թեթև երկաթէ խոփերը, որոնց ձեւիչը քիչ հող է բարձրացնում:

Երբ արեւը սկսեց անյնել սարի ետեւը, կիւսիէնը վերադարձաւ դղեակը: Նա զնում էր կայտառ մարդերի եղբով, Բնութեան գեղեցկութիւնը սիւսում էր երեկոյի մէջ: Աչքերովի նա կրանում էր ամեն ինչ: Եւ նա ըմպում էր զով զեփիւոր, որ հսում էր դաշտի վրայ: Նա գրեց ձեռքը կրծքին, որը կարծես ուռչում էր գարունքից: Եւ նոյն իսկ այդ ուռած սիրոը նրան թուած նեղ և անկարող բովանդակելու իր ակընկալած համակ երջանկութիւնը:

## VIII

Լիւսիէն Հալանդ, մտնելով պ. Մէրանի կարինետը, մրմբնաց, նկատելով վերջինիս տխուր գէմքը.

— Ես տեսնում եմ, որ օրիորդը մերժել է:

Նախընթաց օրը, նա խնդրել էր ժամնիք ձեռքը, ժակ Ալվարի հետ ունեցած կոռուպտ ի վեր մի ամսից աւելի էր անցել: Պ. Մէրանը ընդունել էր նրան գորովալիր ուրախութեամբ և այս խօսքերով.

— Ես ձեզ սպասում էի վաղուց. այլ ես յոյս չունէի: Հէնց որ գուք վերադարձաք այս երկիրը, պարոն Լիւսիէն, ես ընդունեցի ձեզ, իբրև մի որդու: Դուք գիտէք իմ համակրութիւն: Ես գիտեմ, որ աղջիկս երջանիկ կը լինի, ես նրանից բացի այլ ես ոչ չունեմ: Պէտք է նրան տալ երջանկութիւն երկուսի համար, իմ խեղճ Առնիք համար.... Վերադարձէք վաղը. ես կը տեղեկացնեմ տիկին Մէրանին և կը խօսեմ ժաննիք հետ:

Լիւսիէն յիշում էր որ ժամնին երբեմն նշանախօս նայուածքներ և վարմունք ունէր. նա յիշում էր Ալիւլիի վարդերը, որ նա տարել էր հեարը. նա յոյս էր կապել և սպասում էր խաղաղութեամբ: Երբ նա տեսաւ պ. Մէրանի վշտագին դէմքը, նա հասկացաւ և մեծ ցաւ զգաց:

Պ. Մէրանը բռնել էր նրա ձեռքը և ասում էր.

— Ես չեմ հասկանում: Երէկ երեկոյեան ես նրան իմայրի բարի լուրը: Ես ակնկալում էի առաջուց նրա զարմացքը և հաճութիւնը: Իմ տանս այլ ես բնաւ ուրախութիւն չը կայ. ես մտածում էի, որ երէկ աղջիկս կը ծաղկէր, բայց նա գունատուեց, ինչպէս այժմ գուք, նա ինձ պատասխանեց մեղմիկ, այնքան ցածր, որ մայրը չը կարողացաւ լսել. «Ոչ, ոչ, անկարելի է. ես կատմնում եմ ձեզ հետ մեալ, ինձ համար այստեղ լսե է...»: Ես պնդեցի, ես ասայի թէ որքան յարդում եմ ձեզ և ծերութիւնո ապահովեալ կը լինի: Ես նրան նայում էի. Նա խոշոր արտասուք ունէր աչօկեռում: Ապա նա խոյս տուեց պարտէզը, ես հստեւեցի նրան. նա լացում էր և չէր սւզում միսիթարուած լինել...

— Ոհ, ասաց միայն Լիւսիէնը:

Նրա սիրտը աղէկառուը էր լինում և նա խօսք չէր գտնում: Բայց պատուհանից նա նայում էր տիկին Մէրանի սիրեցեալ ծաղկեալ վարդենիներին առանց նրանց ակնմելու: Նա մտածում էր որ ջանիկ աղջիկների սրտերը տարօրինակ են. նա հարցրեց վեհերոտութեամբ.

— Սրդեծը նա ինձ շահասիրուած չէ համարում: Զեր հարստութիւնը հէնց յետագել էր մինչեւ այժմ ինդիրքս, հաւատացնում եմ ձեզ:

— Նա մինչեւ անգամ այդ մասին չէ մտածել. ոչ եւս ես. ուրիշ բան կայ, որ մենք չը գիտենք:

Կիւսիէնը խորհում էր Այդ ծանրակշիռ ժամին, երբ նա վստահ էր պ. Մէրանի դաշնակցութեան վրայ, նա որոնում էր իր անցեալում այդ անակնկալ վշտի պատճառները.

— Յիշում եմ, ասաց նա, այն երեկօն, երբ ես ընկերացել էի ամիկին Ալվարին լճի վրայ պտոյա անելու։ Օրիորդ ժաննին մեզ յանկարծ թողեց։ Նրա մեռնող քոյրը, այնքան ընափր և առաքինի, մեծ կարեկցութիւն էր ներջնչում ինձ, իր ամուսնութիւնից առաջ, ես արդէն նախատեսմանում էի նրա մելամաղական ճակատագիրը։ Կարեկցութիւնից՝ գորովանք, ճանապարհը կարծ է։ Այժմ այլ եւս ոշնչ չը զիտեմ։ Զեր գուսարը՝ Աննին, ինքն այդ երեկոյ ցոյց տուեց ինձ երջանկութիւնս, խօսելով ժաննիի մասին։ Ասացէք նրան այդ եթէ նա զիտենար որքման եմ սիրում իրան։ Թող նա նախանձոտ չը լինի կարեկցութեան մի զգացումի վերաբերմամբ, թէ՛ նոյն իսկ կրքոտ զգացումի։ Բայց գուցէ, այդ չէ պատճառը։ Գուցէ սխալում եմ……

Նրա մտքով անցաւ ժակ Ալվարը. գուցէ սա, առաջ տանելով իր ծրագիրը, պարաստել էր նրա յաջողութիւնը զրպարտելով իր հին բարեկամին։

Պ. Մէրանը ձեռքով յոդնած շարժումն արեց.

— Այսո, գուցէ այդ է. այն երեկօն, որի մասին խօսում էք, ժաննին վերադարձաւ արտասուալից։ Եթէ նա սիրում է, նա կը համաձայնի մոռանալ։

Եւ իր ձանձրացած ժպտով, նա աւելացրեց.

— Ձահիլ աղջկերքը տալիս են իրանց սիրալ ընդ միշտ։ Մենք, տղամարդիկս, այդ մասին շատ չենք մտածում։ Նրանք իրաւունք ունեն պահանջկոտ լինելու։ Բայց ժաննին արի և բարի է։ Եթէ միայն այդ է, նա կը համաձայնի, կարծում եմ։ Եւ սակայն մայդ է։ Նա զգացուն է, բայց ոչ բնաւ զգայասէր։ Նա Աննից աւելի լաւ է հասկանում կենքը և մարդկային զգացումները։ Չը զիտեմ. պէտք է նրա հետ խօսել.

— Այսո, համաձայնեց կիւսիէն, ես կամինում եմ պաշտպանել երջանկութիւնս։ Այնքան մոռացուած կապեր ինձ պահել են հայրենի հողում և այժմ ինձ թւում է, որ միայն ժաննին ինձ կապում է այս տեղերին։ Կամինում էք որ ես խօսեմ նրա հետ։

— Դուք նրան կը գտնեք գերեզմանատան։ Նա ծաղկի փունջեր է դնում իր քրոջ գերեզմանի վրայ։ Պ. Ալվարը մնաց ուղարկել է հազուազիւտ ծաղիկներ Աննիի համար։ Մի ամսից ի վեր, նրա առաքումները շատանում են. նա զբում է կնոջս, ժաննին գրեթէ սրտայոյդ նամակներ։ Այլ ես նախկին Ալվարը չէ։

Լիւսիէն Հալանդը մասզնւութիւն կը համարէք յայտնել պ. Մէրանին, որ ինքն դիտէք Ալվարի այդ նոր վարմունքի պատճառները: Բայց նա սրտի սեղմումն ունեցաւ մտածելով ժակի խաւարին ճարպիկութիւնների մասին:

—Գնացէք, ասաց պ. Մէրանը վեր կենալով:

Եւ մի ծանրաբարոյութեամբ, որ նա չէր տալիս իր խօսքերին Աննիի մահից առաջ.

—Թող Աստուած օգնէ ձեզ! տայ Աստուած, որ դուք վերադառնաք աղջկանս հետ, իբրև երկու նշանածններ...

Ժաննի Մէրանը միայնակ էր Մէնթօնի գերեզմանատանը: Խոնարհուած Աննիի գերեզմանի վրայ, մարմարեայ հրեշտակի մահարձաւով, նա խառնում էր շուշանները յասմիկներին: Խուրասուկուած իր տիսուր մտախոնութիւնների մէջ, նա ոչինչ չէր տեսնում իր շուրջը, ոչ առաւօտեան լոյսի շողերով փայլող սարերը, ոչ զափթափի գալար մարգերը, որտեղից նայուածքը տարածում էր անշարժ և լոյսի բաժակի նման լին վրայ: Նա չը լսեց ծառուղու աւազի ճոճոոցը Լիւսիէն Հալանդի ոտքերի տակ: Նա սարսուց, երբ կանչուց իր անունով:

—Օրիորդ ժաննի...

—Դուք, ասաց նայ:

Նա մտածում էր Լիւսիէնի մասին և սա այդտեղ էր: Երէկուանից ի վեր նա շարունակ մտածում էր այս մասին: Սփոելով ծաղիկները, նա դարձեալ մտածում էր նրա մասին, մոռանալով հանգուցեալին:

Որովհետեւ երկուան ևս շփոթուած էին, չը նկատեցին իրանց փոխադարձ յուզմունքը: Լիւսիէնը ասաց.

—Ես կամենում էի ձեզ հետ խօսել: Ես տեսայ ձեր հօրը, նա ինձ ուղարկեց ձեզ մօտ:

Ժաննին թողեց որ ձեռքից ընկնեն շուշանները և յասմիկները, ինչպէս մի ժամանակ Աննին թողել էր վարդերը լսելով գրեթէ համանման խօսքեր, որ ժակ Ալվարը արտասանել էր: Սակայն, շուտով արիացած, նա պատասխանեց հաստատ, գրեթէ վայրադ ձայնով.

—Ոհ, ոչ, այդ աւելորդ է: Ես զիտեմ ինչու էք գալիս: Ես տուել եմ պատասխանս հօրս: Ես չեմ կամենում ամուսնանալ... ոչ ոքի հետ:

Եւ նրա ձայնը յանկարծ մեղմացաւ աւելացնելու համար.

—Ես շնորհակալ եմ ձեղանից, որ ինձ էք ընտրել, պ. Լիւսիէնը: Ափսոսում եմ:

Լիւսիէնը տանջանք զգաց և այդ վիշտը անդամալուծում

էր նրան։ Նա միշտ յարգել էր ուրիշների մտածմունքը, ուստի և հարցնում էր իրան, արդեօք անփափկանկատութիւն չի լինի պնդելը։ Ժաննին իրան չէ սիրում, ուրեմն էլ ինչի համար փորձել համոզել նրան։ Լիւսիէնը շանկութիւն զգաց փախչել, գնալ շատ հեռու, հեռու նրանից և հեռու այս երկրից, ուր անտարակոյս, նա չէր կարող երջանիկ լինել։ Մի մութ նախազգացումն յետ պահեց նրան։ Շնա մի գաղտնիք ունի. կամնում եմ այն իմանալ, եթէ ինձ համար նոյն իսկ անգութիւնի Առաջներում, նա ինձանից խոյս չէր տալիս։

Նա ջանք արեց խօսքը վերսկսելու։

—Լսեցէք, ժաննի, այս բոպէին գուք իմ երջանկութիւնս էք փշում և գուցէ նաև ձերը. Ոհ, անշուշտ, գուք կը հանդիպէք ուրիշ երիտասարդների, որոնք ինձանից լաւ կարող են ձեզ գուր գալ, ես մնապարծութիւն չունեմ այլ ևս Միայն ես ձեզ սիրում եմ։

Նա խոնարհել էր գլուխը և ոչինչ չէր ասում։ Նրա մազերի մութ, չէկ գոյնը փայլում էր արեի մի շողով։ Թւում էր թէ նա նայում է գետին ընկած ծաղլիճներին։ Լիւսիէնը շարունակեց։

—Ես չի կարծում երջանիկ լինել. ժաննի։ Երկար ժամանակ ես վատ հասկացայ կեանքը և երիտասարդութիւնը և սէրը։ Վերաբաննալով իմայինների այս հին հողի վրայ, ես կարծեցի թէ նորից ոյժ և ուրախութիւն եմ գտել։ Զեզանով ես յոյս ունեմ նորից գտնել սիրու։ Պէտք չէ որ գուք կասկածէք այս սիրու և ինչ որ մտել է նրա մէջ ձեզանից առաջ։ Ես այլ եւս չեմ յիշում այդ, և սակայն վատ զգացումներ չին։ Պրանք անցողական և թոյլ մտածմունքներ էին, որոնք չքացել են։ Այժմ, նրա մէջ միայն դուք կաք։ Եւ ընդ միշտ եթէ դուք կամենաք, կեանքս կը կերպարանափոխուի և ես կը ջանամ որ ձեր կեանքն եւս լինի կատարելապէս վճիտ և հաճելի։ Ես ջաճիլացել եմ այն օրից որ սիրում եմ ձեզ, այնքան ջաճիլացել, որ ինձ այլ եւս չեմ ճանաչում։ Ես այնքան յօյսեր ունեմ։ Եթէ սակայն դուք կամենում էք...! Եթէ չէք կամենում, ես կը գնամ։ Ես ձեզ վերստին տեսնելու քաջութիւնը չեմ ունենայ։ Ասացէք մի խօսք։ Ես կանեմ ինչ որ դուք կորոշէք. միայն ես ձեզ սիրում եմ։

Գրեթէ անլսելի ձայնով, միշտ վայրագ, ջահիլ աղջիկը մրմիջաց։

—Ոչ, դուք ինձ չէք սիրում։ Դուք այդ լաւ գիտէք։ Դուք չը պէտք է այդ խօսքերը այստեղ ասէիք. այդ վատ է։

Այդ ժամանակ Լիւսիէնը նկատեց որ Աննիի գերեզմանն այդտեղ էր, իր ուրքերին։ Եկած լինելով իր սիրոյ համար, նա

Նա միայն ժաննին էր տեսել: Եւ ճշմարիտ, նա մի օտարութիւն էր ընտրել իր խոստովանութիւնների համար: Ութ ամիս հազիւ անցել էր այն օրից՝ որ թաղել էին խեղճ մեռեալին, և նոր ծաղիկների նման նոր զգացումներ ծլում էին արդէն նրանց սրտերում, որոնք սիրել էին նրան: Ժանդիմանում էր նրան իր մոռացկոտութիւնը: արդեօք ինքն եւս իր հերթին չի մոռացուի: Միթէ ամիսներով է չափւում այն յափառենականութեան տարածութիւնը, որ մենք տալիս ենք խօսքերով մեր սէրին: Եւ նա մտածում էր «ուրեմն ողորմելի և փոփոխական սիրտ ունեմ: Եւ սակայն այս երեխուն որ հանգստանում է աստուածային խաղաղութեան մէջ, ինձ ոչ մի բան չէ յանդիմանում, ապահով եմ: Նա հեռացնում էր ինձ իր վշտալի շաղից: Սէրը չէ տեւում առանց սէրի: Մի բարեպաշտ յիշողութիւն է միում ինձ նրանից և ոչ այն կլանող դառնութիւնը, որ ծնւում է կորած գգուանքներից: Ես, աւելի լաւ, կը կանչեմ նրան իբրև մի սրբի և կը հայցեմ նրա բարեխօսութիւնը, որի իշխանութիւնը կը նպաստէ իմ այսորուայ երազին»:

Նա լսել էր այս բաները մտածելիս Եւ, գիւղական այս խաղաղ գերեզմանատնում, լոյսի մէջ լսուում էր միջատների բղզոցը: Ճերմ օրերի այդ կենդանի անորոշ ժխորը:

Նա խզեց վերջապէս այդ լուսութիւնը, որ երկարանում էր և նեղացնում երկուսին էլ:

— Փաննի, նա որ այդտեղ է, այդ օրէննեալ հողի տակ, եթէ կարողանար վեր կենալ գերեզմանից, քեզ կաղաչէր ինձ հետո ես նրան տեսայ վերջին անդամ, լճի վրայ: յիշուր էք, ժաննի: գուք չը կամեցաք զալ: Նա խօսեց ինձ ձեր մասին: Նա հակեցնում էր իմ սիրտը դէպի ձեզ: Նրա իղձերը կատարուեցին, բայց ինձ միայն վիշտ պատճառելու համար: Այդ բռպէին, ճիշտ է, ես դեռ չէի մտածում ձեզ սիրահարական մըտքերով: Դուք կարող էք նայել սրախ մէջ: շատ թշուառութիւններ կան, բայց սուտ չը կայ: Ես գուշակել էի նրա տանջալի կեանքը, նրա հիասթափութիւնները: Այդ վիշտը՝ որ ես զգում էի, ինձ սաստիկ կարեկցութիւն էր ներչնչում: Առաջներում, մայրս երեւակայել էր, որ Աննին իմ կինը կը լինի: Երեխայութեան քաղցր յիշողութիւնները ճնշում էին ինձ: Ժաննի, ես չեմ կարծում որ այդ սէր լինէր. Ես բնաւ չեմ կարծել այդ: Ես չը գիտեմ այդ լաւ բացատրել: Սիրել, նշանակում է ցանկանալ, կամննալ առնել և տալ, առնել մի կեանք և տալ քոնք: Ես ոչինչ չէի ցանկանում Աննիի մօտ, եթէ ոչ մի փոքր երջանկութիւն իր աշքերում և առողջութիւն՝ իր գունատ թշերի վրայ: Բայց ինձ համար, ես ոչինչ չէի ցանկանում...»

Եւ տեսնելով որ ժամնին չէ պատասխանում, նա աւելացրեց.

—Եթէ դուք կամենում էք ինձ սիրել, ևս ձեզ կը ինչպէի նախանձու չը լինել, ես անցրել եմ երեսունը արդէն երկու տարի կայ, ես գիտեմ մարդկային զգացմունքների արժէքը, Դուք կարող էք ինձ հաւատալ երբ ևս ձեզ առում եմ որ սիրու երիտասարդ է, որ երբէք այսպէս չէ բարախիլ ինչպէս այժմ, Զեր առաջ իմ անցեալ շնչւում է, Եւ ձեր քոյր Ամսնին, եթէ մեզ տեսնէր, կուրախանար, ես ամևն կերպ հոգ կը տանեմ, որ դուք միշտ երջանիկ լինէք: Ես այնքան ապահով կը լինեմ մեր երջանկութեան համար: Չէք կամենում... ժամնի, Չէք կամենում...

Նա խօսել էր իսիսա քաղցր և ջերմ ձայնով, փոքրիկ ընդհատուած քարոզներով, աչքերը գետնին յառած և ոչ բարձրացրած ջանիլ աղջկայ վրայ, Որովհետեւ վերջինս ոչինչ չէր ասում, շարժմունք չէր անում, նա որոշեց գնալ Վերջացել էր Այլ ես ոչ մի խօսք չէր դալիս նրա լրիտունքներին: Նա մի ծունկը գրեց մարմարէ շիրիմի վրայ և բռնեց ժամնիի ձեռքը խորին յուզմունքով.

—Որովհետեւ դուք չէք կամենում, մնաք բարե, ժամնի, ես գնում եմ:

Եւ նա վեր կացաւ գնալու: Նա նրան նայեց մի վերջին անդամ: Նու նրան տեսաւ արտուասաթոր, նա ձգել էր նրա վրայ, որ միևնում էր, այնպիսի մի գորսվալիր նայուածք, այնպիսի մի սրտաճմիկ նայուածք, որ նա նորից բռնեց նրա ձեռքը.

—Դուք ինձ սիրում էք, ժամնի, և դուք թողնում էք որ ես գնամ:

Ժամնին հեծկլտում էր նրա թեերում և չէր կարողանում խօսել, իսկ նա կրկնում էր քաղցր յուսոյ մէջ.

—Ես ձեզ սիրում եմ, ես միայն ձեզ եմ սիրում: Ժամնին կարողացաւ միայն մրմնջալ.

—Ես չեմ կարող, ես չեմ կարող: Եթէ դուք իմանայիք... Բայց նա, լրջաբար, աջակցեց նրան.

—Ժամնի, պէտք է ինձ ասել: Գաղտնիք մի պահէք և մի ապանէք մեր երջանկութիւնը:

—Ոչ, ոչ, ես չեմ կամենում ասել:

—Կամենում էք որ ես ձեզ հարցաքննեմ: Պատասխանեցէք ինձ: Հաւատում էք որ ձեզ սիրում եմ:

Նա հակեց գլուխը:

—Եւ դուք, ժամնի, սիրում էք ինձ:

Նա ժպտաց իր արտասուքի մէջ և այդ ժպտաց ցայց էր տալիս թէ ինչպէս նա սիրում էր նրան վաղուց:

—Արդեօք Աննիի պատճառով է որ դուք չեք ուզում:

Նա արտասանեց արագարար:

—Այս, բայց այն չէ, ինչ որ դուք եք կարծում:

Լիւսինը զարմացա.

—Դուք երկմիտ չեք իմ բարեկամութեան մասին դէպի Աննին. այնպէս չէ: Ուրեմն ինչ է: Ես չեմ կարողանում զուշակել:

Ժաննիի արտասուքը չէին հոսում այլ եւս նա մտմտում էր:

—Ես չեմ համարձակում, ասաց նա վերջապէս:

—Ես յանցաւոր եմ եղել Աննիի դէմ: Ես արժանի չեմ երջանկութեան. այդ պատճառով չեմ էլ ուզում:

Նա աշխատում էր հասկանալ և միշտ բռնած ունէր մատաղանաս աղջկայ ձեռները:

—Ժաննի, ես բոլորովին ապահով եմ ձեր վրայ: Դուք ձեզ երեակայական յանդիմանութիւններ էք ուղղում: Մտածեցէք մեր երջանկութեան մասին, որին յոռի տեսիլներ չեն կարող խոչընդուռ լինել:

Ժաննին յետ քաշեց ձեռներից մինը և յենեց մարմարեայ մահարձանին:

—Լաւ, ես ամեն բան կը յայտնեմ ձեզ: Դուք ինձ կը ներէք: Ես այլ ես դժբախտ լինելու քաջութիւնը չունեմ:

—Ոհ, ես ներում եմ ձեզ առաջուց:

Երկուո՞ն էլ ժպտացին, որպէս թէ արդէն սկսում են նկատել ուրախութեան ապագան: Սակայն ժաննին դեռ վարանում էր:

—Հեշտ չէ պատմելը, ասաց նա այն ծիծաղուն արտայայտութեամբ, որ սովորաբար տալիս էր նրա դէմքին արթուն ցնծութեան հրապոյր:

Կարմրատակելով, նա շարունակեց:

—Դուք յիշում էք տիկին Ֆերրէզին: Քրոջս ամուսնութիւնից առաջ, ես կարծեմ նկատել էի մի քիչ... ծուռ յարաբերութիւն այդ կնոջ և ժակ Ալֆարի մէջ: Իմ առաջ շատ էլ չէին քաշուում: Ես դեռ երեխայ էի: Սակայն ես գիտէի արդէն սիրել: Դուք գանում էք ես խելօք չիի: Աննին ոչինչ չէր նկատում: Նա ապրում էր երազի մէջ: Ես կամեցայ իմացնել նրան. Ես զախում էի որ չը վշտացնեմ նրան: Մի երեկոյ, ընտրութիւնների երեկոն, ես սկսել էի, բայց ճիշդ այդ բովէին դուք հասաք: Յետոյ ես լաւ տեսայ, որ պարտաւոր էի ասել նրան այդ բաները: Այդ կինը այնքան տանջել առեց նրան... Ոհ, այդ

Ժակը, ևս արդէն ատում էի նրան, գրեթէ նոյն չափ, ինչքան այժմ:

Լիւսիէնը ցոյց առւեց զետնի վրայ փոռւած ծաղիկները.  
—Այս ծաղիկները նա է ուղարկել:

—Ոչ, նրա ծաղիկները ես դէն եմ ձգում, ևս այդ չեմ ասում ոչ ոքի, նրա կեղծաւոր նամակները նոյնպէս դէն եմ ձգում...: Բայց ես դեռ չեմ հասել ամենադժուարին տեղը...:  
Նա հառաջեց, և արիաբար աւարտեց.

—Եթէ ես զգուշացրած լինէի Սննիին, անշուշտ, նա չէր կամենայ ամուսնանալ ժակի հետ: Այն ժամանակ նրան դուք կը սիրէիք. ինձ դուք մինչև անգամ չէք էլ նայում այդ ժամանակ: Այդ ինձ շատ մեծ վիշտ պատճառած կը լինէր: Եթէ ես լուցի, գուցէ որովհեաւ մտածում էի ձեր մասին: Այժմ հասկանում էք: Երկիւղ եմ կրում, ոհ, երկիւղ եմ կրում: Աննիի երջանկութիւնն էք դուք ինձ առաջարկում: Դուք լաւ տեսնում էք այժմ որ չեմ կարող...:

Նորից նա լացեց հեծկլատանքով: Լիւսիէնը առաւ նրան իր թեւերի մէջ, և նրանից աւելի մեծ լինելով, նա յենեց իր կրծքին այդ թանկագին գլուխը.

—Ժաննի, մի վախէք: Աննին սիրում էր ընդ միշտ և դուք գիտէք որ ինձ չէր սիրում: Ես ձեզ սիրում եմ. ձեր խղճահար հոգու համար ես աւելի եմ սիրում ձեզ:

Ժաննին թեքուել էր Լիւսիէնի վրայ և սա զգում էր նրա ձկուն իրանը ու զմայլում էր նրա մուգ պղնձագոյն ցոլք ու նեցող վարսերով, շողջողուն ծոծրակով: Նա ցանկութիւն զգաց կունալ և համբուրել նրան, բայց չը կամեցաւ խռովել մի գրգուանքով իր երկշուն նշանածին: Նա տեսնում էր իրանց ոտքին մարմարեայ շիրիմը և իրանց վերեւ, սիւնի վրայ, յարութիւն աւետող հրեշտակը: Մինչ ժաննին, դեռ սգազգեստ, լացում էր ամբողջովին սիրահար՝ իր թեւերի մէջ, նա մտածում էր, որ արեւով հեղեղուած՝ մեռեալների այդ դաշտի մէջ, իրանց զոյզը հանդիսանում էր իրբեւ նշանաբան կեանքի, տեւականութեան, որ յայտնում էր հրեշտակը: Նա զգում էր իր երիտասարդութիւնը, որ լցնում էր նրան անհուն յոյսով: Նա կ'երկարաձգի իր ցեղը, նա իր հերթին մարդիկ կը սաեղծի: Մի և նոյն ժամանակ նա զգում էր մի խորին գորովանք դէպի այդ հեղ և արի երեխան, որ անձնատուր էր լինում իրան:

—Ժաննի, մի լացէք:

Սա բարձրացրեց գլուխը: Այլ ևս նա չէր լացում, բայց իր օգոստոս, 1902.

պայծառ աչքերը, դեռ թաց, փայլում էին ցօղերով շաղախուած այն վարդերի նման, որ շողշողում են արշալոյսին, իբրեւ մարգագետինների թանկազին քարեր, և այսպիս կիւսինին ժպտուն և որովհետեւ մի վերջին արտօսը հոսում էր այտի վրայ.

—Այդ ուրախութիւնից է այժմ, ասաց,

Սառուղիի ծայրին, պ. և տիկին Մէրանները նկատեցին նրանց միասին վերադառնալիս:

—Լաւ է, շատ լաւ է, հաւանում էր բարի տիկինը:  
Արիւնը խիել էր նրա երեսին, որովհետև ամբողջ առաւոտը գործ էր զրել բարձրացնելու իր սիրելի ծաղիկների տակ և տնկելու նորերը աշնանային ծաղկման համար և անգստանում էր՝ կտրելով վարդեր սրահի ծաղկամանների համար:

Նրա ամուսինը, որ աւելի զգայուն էր դարձել Աննիի մահուանից ի վեր, խանդաղալուում էր.

—Նայիր նրանց, փեսան աւելի մեծ, աւելի թուխ է, իսկ հարսնացուն չէկ է: Լաւ զոյց են կազմում:

—Այն, ճշմարիտ է, հաստատեց կինը առանց աչքերը բարձրացնելու:

Եւ մի հարուածով նա կտրեց մի ճիւղ:

Սակայն կիւսինը Մէրանների գեղեցիկ կալուածի պատճառով, որից անցնում էին, ասում էր իր ջահիլ նշանածին.

—Դուք զիտէք ժամնի, իմ բոլոր ունեցածս Ավիւլինէ:  
Նա կտրեց նրա խօսքը.

—Երբէք այդ տեսակ բաների մասին չը խօսենք: Աննին ասում էր թէ հարստութիւնը մի ասիթ է աւելի բարիք գործելու համար:

Երբ բոլորովին մօտեցան, տիկին Մէրանը առաջացաւ դէպի երիտասարդը, առանց զարմացքի, իր կտրիչը ձեռքին.

—Ո՞հ, պարմն Հալանդ, ես միշտ մասածել էի, որ դուք կամումնանաք աղջիկներիս մէկի հետ:

Պ. Մէրանը սեղմեց նրա ձեռքը և նրա աչքերը արտայացառում էին նրա համակրութիւնը:

—Այժմ, ես այլ ես չեմ վախում տարիներից: Ես կը յենուեմ ձեր երիտասարդութեան վրայ:

—Այն, ասաց կիւսինը: Ճշմարիտ է, ես երիտասարդ եմ:  
Երջանկութիւնն է այդ:

Ծերունին աւելացրեց ծանրախոն:

—Հալըենի հողն է: Յիշում էք հսկայ Անտէյի, երկնքի և  
երկրի որդու լեզենդի մասին: Նա կուռում էր Հերկուլի դէմ:

Ամեն անգամ որ ստքը դիպչում էր Հողին, իր մօրը, նա իր մէջ մի նոր ոյժ էր զգում։ Մարդիկ այդպէս էին, Վերադառնալով հայրենի հողի վրայ, նրանք ստանում են անցեալ գանձերը և հաւատ՝ ապագայի մէջ, որովհետեւ նրանք այդտեղ գտնում են նախնիքների ոգին և նրանք հասկանում են, որ ամեն մի տեւական գործ անցնում է մի մարդի կեանքից....

Թարգմ. Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Ա. Ե. Բ. Զ.